Իրավունքների Պաշտպանություն
Առնետ Սահմանների ՀԿ

Բաց Հասարակության
Հիմնադրամներ
Հայաստան

ՀԱՏՈՐ 38

Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում

օրենսդրական կարգավորումներ և պրակտիկա

Երևան, 2023

Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից «Արդարացի դատահրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան»-ի ֆինանսավորմամբ:

Զեկույցում տեղ գտած վերլուծությունները, տեսակետները և եզրահանգումները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել «Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան» կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Զեկույցը կազմել են Հասմիկ Հարությունյանը, Արաքս Մելքոնյանը:

Դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի մշտադիտարկումը և դատավոր ընտրված անձանց վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը իրականացրել են Դիանա Հարությունյանը և Լուսինե Լալայանը: Տեղեկությունների հավաքագրմանը մասնակցել է նաև Նինա Հակոբյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 5

1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ 6

2. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ, ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ, ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ 13

3. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 22

Ընդհանուր տեղեկություններ որակավորման գրավոր քննությունների կազմակերպման և ընթացքի վերաբերյալ 22

Որակավորման գրավոր քննության առաջադրանքը 24

Արդյունքների բողոքարկման ժամկետը 28

Որակավորման ստուգման հոգեբանական թեստավորում եւ հարցազրույցի փուլ 29

Հոգեբանական թեստավորման անցկացումը 30

Հակակոռուպցիոն փորձագետների հետ հարցազրույցը 32

Հարցազրույցի փուլ 33

Հարցադրումներ ներկայացված բարեվարքության թերթիկների վերաբերյալ 37

Բարձրագույն դատական խորհրդի կողմից հարցազրույցի գնահատումը 38

4. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ 39

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 39

Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով դատավորների թեկնածուների վերաբերյալ տեղեկություններ 39

Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող և Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորների թեկնածուների վերաբերյալ տեղեկություններ 45

Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորների վերաբերյալ տեղեկություններ 48

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները 50

Բարձրագույն դատական խորհրդի որոշումը մի խումբ դատավորների թեկնածուների 54

ցուցակներից հանելու վերաբերյալ 54

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 55

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 59

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2019-2023թթ. հակակոռուպցիոն ռազմավարության[1] ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունը թևակոխեց հակակոռուպցիոն պայքարի նոր փուլ, որի շրջանակներում, ի թիվս այլնի, առանձնակի կարևորություն ստացավ Հայաստանում մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը: Վերջինիս ձևավորումը դիտարկվում էր որպես համակարգին լրացուցիչ կայունություն և ամբողջականություն հաղորդող քայլ:

Սկզբնական շրջանում հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը կարևորվում էր նաև 2018 թվականի «Թավշյա հեղափոխությունից» հետո հանրության մեջ «անցյալին գնահատական տալու» պահանջատիրությամբ[2]: Սրա մասին են վկայում նաև ռազմավարությամբ ՀՀ Կառավարության սահմանված հիմնարար ուղենիշները՝ կոռուպցիայի դեմ առավել թիրախավորված և արմատական պայքար մղելը, կոռուպցիայի հանրային մերժում և կոռուպցիայից զերծ հանրության առկայությունը:

Այս մոտեցումներն ու նպատակները կյանքի կոչելը պահանջում է կոնկրետ գործողություններ, որոնց մեջ կենտրոնական դերակատարում ուներ հակակոռուպցիոն մարմինների և մասնավորապես, դատարանի ձևավորումն ու արդյունավետ գործունեությունը:

Հատկապես արդյունավետ գործունեության և կոռուպցիայի դեմ իրական պայքարի ապահովման համար էական նշանակություն ունեն դատարանի ձևավորման, դատավորների ընտրության և նշանակման ընթացակարգերը, որոնց մշտադիտարկումը թույլ է տալիս արձանագրել արդեն իսկ առկա դրական և բացասական զարգացումները, առկա խնդիրներն ու բարեփոխման ենթակա ուղղությունները: Ակնկալվում է, որ վեր հանված տվյալներն ու մտահոգությունները ի գիտություն կընդունվեն որոշում կայացնողների կողմից՝ առկա խնդիրները վերացնելու և հետագայում նման դրսևորումները կանխելու եղանակով, ինչը բխում է Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարությունից և նպատակներից:

Այդ նպատակով, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվել է հակակոռուպցիոն դատարանի ձևավորման, դատավորների ընտրության և նշանակման գործընթացի մշտադիտարկում և ուսումնասիրություն: Ուսումնասիրության շրջանակներում վերլուծվել են ինչպես առկա օրենսդրական կարգավորումները, դատարանի իրավասության շրջանակը, դատավորների թվակազմերը, թեկնածուներից պահանջվող չափանիշներն ու որակավորման քննությունների կազմակերպման կարգավորումները, այնպես էլ պրակտիկայում դրանց կիրառումը: Ներպետական օրենսդրական կարգավորումները դիտարկվել են միջազգային փորձի հետ համադրության մեջ:

Դատավորների ընտրության և նշանակման գործընթացի վերաբերյալ պրակտիկ տվյալներ ստանալու նպատակով կազմակերպության կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով դիտարկվել է նաև Բարձրագույն Դատական Խորհրդում (հետայսու՝ նաև Խորհուրդ կամ ԲԴԽ) դատավորների ընտրության գործընթացը:

---

[1] Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարություն, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշում, https://www.gov.am/u_files/file/anti-korupcia/razmavarutyun-2019.pdf:

[2] Հայտարարություն անցյալի խախտումներին անհապաղ քաղաքական գնահատական տալու և համակարգային փոփոխություններ իրականացնելու մասին, https://transparency.am/hy/media/news/article/2952:

Որպես առանձին և կարևոր բաղադրիչ, կազմակերպության կողմից իրականացվել է նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից հակակոռուպցիոն դատարանի դատավորների ցուցակում ներառված թեկնածուների հավակնորդների պրոֆայլինգ՝ փորձելով վեր հանել վերջիններիս մասնագիտական անցյալի, նախկին զբաղվածության, ընտանեկան և այլ կապերի, ֆինանսական դրության վերաբերյալ տվյալներ:

Օրենսդրության ուսումնասիրության և մշտադիտարկման արդյունքում հնարավոր է եղել վեր հանել առկա հիմնական խնդիրներն ու մտահոգությունները, որոնց կապակցությամբ ներկայացվում են նաև համապատասխան առաջարկություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են տեղեկատվության հավաքագրման տարբեր մեթոդներ:

Օրենսդրության ուսումնասիրություն. ուսումնասիրության առաջին մասում մանրակրկիտ վերլուծության են ենթարկվել ՀՀ ներպետական վերաբերելի կարգավորումները, որտեղ կենտրոնական դեր է ունեցել ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքը (հետայսու տեքստում՝ ՀՀ դատական օրենսգիրք): Զուգահեռաբար ուսումնասիրվել են նաև ԲԴԽ համապատասխան որոշումներն ու ընդունված կարգերը:

Մշտադիտարկում/դիտորդություն. դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի գնահատման նպատակով իրականացվել է Բարձրագույն դատական խորհրդի կողմից հայտարարված մրցույթների դիտորդություն: Սույն հետազոտության շրջանակներում դիտարկվել են 2022թ.-ի հունվարից-սեպտեմբեր ամիսների ընթացքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի արտահերթ համալրման նպատակով անցկացված գրավոր քննությունները, ինչպես նաև հոգեբանական թեստավորման փուլն ու հարցազրույցները:

2022 թվականի հունվարի 10-ին և 11-ին կայացել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի արտահերթ համալրման նպատակով անցկացված որակավորման գրավոր քննություններ: Քննություններին մասնակցել է համապատասխան ենթաբաժինների 12 և 27 հավակնորդ: 2022թ. փետրվարի 14-ին, 15-ին և 17-ին կայացել է հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով ենթաբաժինն արտահերթ համալրելու նպատակով անցկացվող հարցազրույցը:

Կազմակերպության կողմից իրականացվել է նաև 2022 թվականի մայիսի 23-ին տեղի ունեցած առաջին ատյանի դատարաններում դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի

որակավորման գրավոր քննությունը: Կազմակերպության կողմից դիտարկվել է նաև գրավոր փուլի հաղթահարման արդյունքում 2022 թվականի օգոստոսի 5-ին Խորհրդում կայացած հարցազրույցի փուլը, որին մասնակցել է գրավոր փուլը հաղթահարած 4 թեկնածու և վերջնարդյունքում հավակնորդների հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի ցուցակում ներառվել է մեկ թեկնածու:

Որակավորման քննությունների մշտադիտարկում իրականացնելու համար կազմակերպությունը նախապես Դատական օրենսգրքով սահմանված կարգով դիմում է ներկայացրել Բարձրագույն դատական խորհրդին, ինչի հիման վրա հնարավոր է դարձել որպես դիտորդ ներկա գտնվել որակավորման քննություններին և խորքային տվյալներ ստանալ դրանց ընթացքի վերաբերյալ:

Տեղեկատվության հարցումներ. առանձին հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու նպատակով ներկայացվել են տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումներ Բարձրագույն դատական խորհրդին և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (հետայսու՝ ԿԿՀ կամ Հանձնաժողով):

Բաց տվյալների ուսումնասիրություն: Կազմակերպության կողմից իրականացվել է նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների թեկնածուների ցուցակներում ներառված, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից ՀՀ վճռաբեկ դատարանի համակոռուպցիոն պալատի դատավոր ընտրված անձանց վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում և ուսումնասիրություն: Դատավորների թեկնածուների հավակնորդների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումն իրականացվել է ըստ մշակված հարցաշարում ներառված հարցերի, որոնք ներառել են թեկնածուների մասնագիտացվածության, նախկին զբաղվածության, ընտանեկան և այլ կապերի, գույքային և ֆինանսական դրության, մասնագիտական գործունեության վերաբերյալ տվյալները, նրանց անձը բնութագրող այլ հարցեր: Տեղեկությունները հավաքվել են համացանցի բաց աղբյուրներից՝ սոցիալական ցանցեր, լրատվամիջոցներ, պետական մարմինների կայքէջեր և այլն: Անհրաժեշտ է նշել, որ զեկույցում արտացոլված տեղեկությունները կախված են եղել թեկնածուի վերաբերյալ բաց աղբյուրներում առկա տեղեկությունների հասանելիությունից և ծավալներից: Զեկույցում արտացոլված տեղեկությունները հավաքվել են և ճիշտ են 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ:

1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

2020 թվականի հուլիսի 31-ին շրջանառվեց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով նախատեսվեց ստեղծել մասնագիտացված հակակոռուպցիոն դատարան[3]:

[3] «Հայաստանի հանրապետության դատական օրենսգիրք» Սահմանադրական օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին», «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին»

Դատարանի ստեղծման նախապատմությունը գալիս է դեռևս 2019 թվականին ընդունված Հակակոռուպցիոն ռազմավարությունից, որի իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 3-րդ կետով նախատեսվում էր հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում[4]:

Համաձայն Դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին վերոնշյալ նախագծի հիմնավորումների[5]՝ կոռուպցիոն բնույթի գործերով մասնագիտացված քննությունը նոր հարթակի վրա պետք է դնի կոռուպցիայի դեմ իրականացվող պայքարի արդյունավետության աստիճանը:

Նախագծի փաթեթով կոռուպցիայի դեմ պայքարի հարցի առնչությամբ հղում էր կատարվում այլ պետությունների դատական մասնագիտացման տենդենցին նաեւ հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտում, մասնավորապես՝ մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ ստեղծելու տեսքով, որոնք կոչված են արդարադատություն իրականացնելու կոռուպցիոն բնույթ ունեցող հանցագործությունների գործերով: Ըստ այդ հիմնավորումների՝ «մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ ստեղծելու հիմնական փաստարկները հանգում են նրան, որ մասնագիտացված դատարանները բարձրացնում են գործերի քննության արդյունավետությունը՝ հստակ որոշված ընթացակարգի միջոցով, ինչպես նաև նպաստում են առավել բարձրորակ և հաստատուն դատական պրակտիկայի ձևավորմանը իրավունքի առանձին ոլորտներում»[6]:

Ըստ այդմ, հակակոռուպցիոն դատարաններ ստեղծելու հարցում մեջբերվում են երեք հիմնական փաստարկներ՝ արդյունավետություն, ամբողջականություն և մասնագիտացվածություն: Այս համատեքստում նախագծի հեղինակների կողմից նշվում էր, որ Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը նպատակ է հետապնդում նաև բարձրացնել դատական համակարգի արդյունավետությունը: Մասնագիտացված դատարանը, որն զբաղվում է միայն կոռուպցիոն և համանման իրավախախտումների քննությամբ, կունենա առավել արդյունավետ դատավոր-դատական գործ հարաբերակցություն, հնարավորություն կստեղծվի դատական գործերը քննել առավել արագ՝ հակակոռուպցիոն դատարանների կողմից գործի քննության առավելագույն ժամկետի սահմանմամբ: Մասնավորապես, ակնկալվում է ստեղծել հակակոռուպցիոն և վերաքննիչ հակակոռուպցիոն դատարաններ, որով կապահովվի կոռուպցիոն գործերի մասնագիտացված քննությունը՝ ըստ այդմ բարձրացնելով կոռուպցիոն գործերի դատաքննության արդյունավետությունը:

Նախատեսվում էր ստեղծել մասնագիտացված հակակոռուպցիոն դատարան՝ առնվազն 25 դատավորի թվակազմով, որոնցից 20-ը կքննեն ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը, իսկ 5-ը՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա ներկայացված դիմումներից և

Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքների եվ հարակից օրենքների նախագծեր, https://www.e-draft.am/projects/2644

[4] ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր https://www.moj.am/storage/files/pages/pg_7105326429693_Gortsoghutyunneri_Tsragir.pdf

[5] https://www.e-draft.am/projects/2644/about
Փոփոխությունների նախագծի հիմնավորում

[6] Տե՛ս հղում 1:

հայցապահանջներից բխող գործերը: Նախագծերի փաթեթով առաջարկվեց նաև ստեղծել մասնագիտացված վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան՝ առնվազն 10 դատավորի թվակազմով: Ըստ նախագծով առաջարկվող փոփոխությունների՝ Վճռաբեկ դատարանում քրեական պալատը գործելու է 8 դատավորի թվակազմով, իսկ քաղաքացիական և վարչական պալատը՝ 13 դատավորի թվակազմով:

2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի փոփոխություններից հետո վերջնական հաստատում և ամրագրում ստացավ երկրում հակակոռուպցիոն դատարանի կազմը, դատավորների թիվը, ձևավորման կարգն ու դատարանի իրավասությունները:

Դատական օրենսգրքի 2-րդ հոդվածով մասնագիտացված դատարանների շարքում, ամրագրում ստացավ նաև հակակոռուպցիոն դատարանը[7]:

- Դատարանի իրավասությունների շրջանակը

Դատական օրենսգրքի 24-րդ հոդվածը սահմանեց հակակոռուպցիոն դատարանի իրավասությունների շրջանակը: Մասնավորապես, հակակոռուպցիոն դատարանին ենթակա են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով հակակոռուպցիոն դատարանների իրավասությանը վերապահված գործերը, ինչպես նաև քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը[8]:

Քրեական դատավարության օրենսգիրքը գործերի նախաքննության կարգավորումներով հստակեցնում է նաև համապատասխան հանցագործությունների շրջանակը՝ հղում կատարելով արդեն քրեական օրենսգրքին և մասնավորապես վերջինիս 6-րդ հավելվածով սահմանված կոռուպցիոն բնույթի հանցագործություններին[9]:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի մասին» ՀՀ օրենքով սահմանված են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի հետ կապված հարաբերությունները, ուսումնասիրություն սկսելու հիմքերը, վարույթ հարուցելու և ուսումնասիրություն իրականացնելու իրավասու մարմինների շրջանակը և բռնագանձման հետ կապված այլ հարաբերություններ:

- Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թվակազմը

Փոփոխված և լրացված դատական օրենսգրքով վերջնական ամրագրում ստացավ հակակոռուպցիոն դատարանի դատավորների թվակազմը, այն է՝ դատարանը գործում է առնվազն 15 դատավորի թվակազմով, որից առնվազն 10-ը պետք է լինեն կոռուպցիոն հանցագործությունների

[7] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 2:
[8] Տե՛ս նույն տեղում, հոդված 24:
[9] ՀՀ Քրեական օրենսգիրք, Հավելված 6, Կոռուպցիոն հանցագործությունների ցանկ: 2021թ. մայիսի 5-ին ընդունվեց նոր ՀՀ քրեական օրենսգիրքը, որի Հավելված 1-ը նախատեսում է կոռուպցիոն հանցանքների ցանկը:

քննության գործերով մասնագիտացմամբ, իսկ առնվազն 5-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներ[10]:

Փոփոխություններով ավելացվեցին նաև վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատավորների թվակազմերը: Վերաքննիչ քաղաքացիական դատարանում նախկինում 16 դատավորի կազմը փոխարինվեց 22 դատավորի թվակազմով: Իսկ վերաքննիչ քրեական դատարանում 18 դատավորի կազմը փոխարինվեց 24 դատավորի թվակազմով[11]:

Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերը վերանայելու համար վերաքննիչ քրեական դատարանում նախատեսվեց առնվազն 6 թվակազմով առանձին դատավորներ[12]: Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերը վերանայելու համար վերաքննիչ քաղաքացիական դատարանում նախատեսվեց առնվազն 6 թվակազմով առանձին դատավորներ[13]:

Համանման փոփոխություններ կատարվեցին նաև վճռաբեկ դատարանում՝ քրեական, քաղաքացիական և վարչական պալատներին զուգահեռ նախատեսելով հակակոռուպցիոն պալատը՝ 10 դատավորի թվակազմով: Հարկ է ներկայացնել նաև, որ քրեական պալատում դատավորների թվակազմը 6-ն է, քաղաքացիական պալատում՝ 7, իսկ վարչական պալատում՝ 5[14]:

Պետք է արձանագրել, որ ի սկզբանե ոչ նախագծի հայեցակարգում, ոչ քննարկումների և փոփոխությունների հաստատման ընթացքում նախատեսվող դատավորների թվակազմերի վերաբերյալ հիմնավորում չի ներկայացվել: Չի հստակեցվել, թե ինչպիսի գնահատումների հիման վրա է որոշվել, որ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը կունենա 10 դատավորի թվակազմ, կամ վերաքննիչ քրեական դատարանում կլինի 6 դատավորի թվակազմ: Դատավորների թվակազմերի հաստատումը առավել պարզ և ընդունելի լինելու համար ցանկալի կլիներ փոփոխությունների նախագծի հայեցակարգում ունենալ դատավորների թվակազմերի որոշակի գնահատում՝ հաշվի առնելով օրինակ տարեկան կտրվածքով հնարավոր գործերի քանակն ու դատարանի ծանրաբեռնվածությունը, նմանատիպ գործեր քննելու ընդհանուր առանձնահատկությունները, ծավալներն ու բարդությունը:

Հակակոռուպցիոն դատարանում գործերի ծավալն ու դատավորների թիվը նման դատարան ներդնող բոլոր երկրներում կարևոր ուսումնասիրության հարցերից է եղել: Դատարանի գործերի ծավալի ու դատավորների քանակի հարցը ուղիղ կապված է այն հանգամանքից, թե հատուկ մասնագիտացված դատարանը առաջին ատյանի դատարան է, վերաքննիչ, թե բոլորը միասին: Սակայն նույնիսկ այս հանգամանքը միանշանակ միակ չափանիշը չէ դատավորների քանակը որոշելիս:

Մեծ կազմով դատարան ստեղծելու նպատակը հասկանալի է այնքանով, որ կոռուպցիոն գործերը հնարավոր է քննել առավել արագ ու արդյունավետ եղանակով: Սա ավելի ընդունելի է երկրներում, որտեղ կոռուպցիոն գործերի պոտենցիալ թիվը մեծ է, և հնարավոր է ծանրաբեռնվածություն

[10] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 25:
[11] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 28:
[12] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 28.1:
[13] Նույն տեղում:
[14] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 30:

ստեղծվի: Ֆիլիպիններում, օրինակ, տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններով կոռուպցիոն գործեր քննող դատավորների թիվը 15-ից դարձավ 21, նույնիսկ այդ պարագայում որոշ մասնագետների կողմից քննարկվում էր, որ առկա գործերի և ծանրաբեռնվածության պայմաններում կարիք կար ավելի մեծ թվով դատավորների՝ ընդհուպ մինչև թվով 45 դատավորի կազմով[15]:

Միևնույն ժամանակ առկա են մի քանի մտահոգիչ հանգամանքներ, մասնավորապես, կապված ծախսերի հետ, որոնք պետք է հաշվի առնվեն հակակոռուպցիոն դատարանների դատավորների թիվը մեծացնելիս:

Նախ, կարևորագույն հարցերից մեկը կապված է բավարար որակավորում ունեցող անհրաժեշտ քանակի դատավորներ գտնելու հետ: Եթե պետության քաղաքականությունը սոսկ կոռուպցիոն բնույթի գործեր քննող դատավորների կարողությունները բարելավելը չէ, այլ բարձր որակավորում ունեցող հատուկ մասնագիտացում ունեցող մասնագետներ ունենալը, ապա այն կարող է իրական մարտահրավերներ ստեղծել այդ պաշտոնները լրացնելու հարցում:

Մեծ թվով դատավորներ նախատեսելու առնչությամբ մեկ այլ խնդիր կապվում է նրա հետ, որ նման դատարանի ծավալն ու կարգավիճակը արհեստական մեծացնելով ու կարևորություն տալով, կարող է բացասական անդրադարձ տեղի ունենալ մնացած դատարանների ու մասնագիտացում ունեցող դատավորների վրա:

Վերջին խնդիրը կապվում է այն պահանջի հետ, որ հակակոռուպցիոն դատարանները պետք է լրացվեն բացառապես բարձր բարեվարքություն ունեցող դատավորներով, ինչի համար որոշ համակարգեր պահանջում են ընտրության ու ստուգման հատուկ ընթացակարգ: Ինչքան մեծանում է պահանջվող դատավորների թիվը, այնքան դժվարանում է բարեվարքության ստուգման ու ապահովման կանոնների խիստ պահպանումը: Սրա մասին վկայում է նաև առանձին երկրներում արդեն իսկ արձանագրված փորձը: Օրինակ, Ինդոնեզիայում ստեղծված հակակոռուպցիոն դատարանը ի ցույց է դրել նշված խնդրի իսկությունը: Նախնական տարբերակում դատական յուրաքանչյուր պանել ներառում էր երկու սովորական և երեք ad hoc դատավորներ, ովքեր ընտրվում էին մանրամասն ստուգման արդյունքում: Ad hoc դատավորները բարեվարքության և անկողմնակալության առումով մեծ վստահություն ու հեղինակություն էին վայելում: Երբ որոշում կայացվեց ընդլայնել հակակոռուպցիոն դատարանի կազմը, նաև ad hoc դատավորների թիվը, որոշումից հետո խնդիրներ ծագեցին ոչ միայն բավարար թվով կադրեր գտնելու և հաստիքները լրացնելու, այլ նաև բարեվարքության արդյունավետ ստուգման հետ կապված[16]:

Դատավորների թվի առնչությամբ հիմնական եզրահանգումը հանգում է նրան, որ հակակոռուպցիոն ոչ մեծ թվով գործերի և հատուկ պատրաստում ունեցող ոչ մեծ թվով դատավորների պարագայում խորհուրդ է տրվում նախատեսել ոչ մեծ կազմով հակակոռուպցիոն դատարան[17]:

---

[15] Matthew C Stephenson, Specialized anticorruption courts, A comparative mapping, Harvard, Anti- corruption Resource center, 2016:
[16] Տե՛ս նույն տեղում:
[17] Տե՛ս նույն տեղում:

ՀՀ պարագայում հակակոռուպցիոն դատարանի ստեղծման ու դատավորների թվի նախատեսման առնչությամբ որևէ նախնական գնահատում և/կամ հաշվարկ չի կատարվել, որը թույլ կտար պատկերացում կազմել քննության ենթակա հնարավոր գործերի մոտավոր թվի մասին, և ըստ այդմ նաև անհրաժեշտ դատավորների թվի մասին:

Մինչդեռ, ձևավորված դատարանն ու դատավորների թիվը մի շարք հարցերի տեղիք է տալիս: Օրինակ, թե ինչ չափանիշով կամ գնահատման հիման վրա է որոշվել վերաքննիչ ու վճռաբեկ դատարանում դատավորների թիվը, ինչպես է որոշվել, որ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում անհրաժեշտ են ավելի մեծ թվով դատավորներ, քան քրեական պալատում: Չնայած պետության կողմից նախնական ուսումնասիրություններում ներկայացվել է, որ 2019 թվականի դրությամբ դատաքննության փուլում առկա է եղել կոռուպցիոն բնույթի հանցագործություններով թվով 110 քրեական գործ՝ 237 անձի վերաբերյալ[18]: Կոռուպցիոն բնույթի քրեական գործեր քննելու համար մասնագիտացված առանձին դատարան ստեղծելու և դատավորների թվակազմը սահմանելու համար կատարված ուսումնասիրության համաձայն՝

Քրեական մասնագիտացման մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը.

- 2016 թվականին կազմել է 79 քրեական գործ,
- 2017 թվականին՝ 85 քրեական գործ,
- 2018 թվականին՝ 82 քրեական գործ:

Այսինքն, օրենքն ընդունելուն նախորդող վերջին երեք տարիների կտրվածքով քրեական մասնագիտացման մեկ դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 82 քրեական գործ[19]:

Նշվել է նաև, որ 11 քրեական գործով անձինք մեղադրվում են միաժամանակ ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու մեղադրանքով:

Հայեցակարգի հիմնավորումների համաձայն՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով քրեական գործերի քննությունն իրենից զգալի բարդություն է ներկայացնում՝ պայմանավորված հիշյալ հանցագործությունների կատարման բնույթով: Ավելին, առանձնապես ծանր հանցագործություններով դատարանը սահմանափակված է գործն արագացված կարգով քննելու հնարավորությունից և դրանք ըստ էության քննության է առնում ընդհանուր կարգով, ինչն իրենից արդեն իսկ ներկայացնում է գործի երկարատև քննություն:

Նախագծի հեղինակները, ըստ այդմ, եզրահանգել են, որ մասնագիտացված դատարանի դատավորների թվակազմը սահմանելիս հարկ է նկատի ունենալ, որ դատական վիճակագրությունը կարևոր, բայց ոչ բավարար տեղեկատվություն է այդ հարցի հստակ որոշման համար: Հետևաբար, առաջարկվում է դատավորների թվակազմը սահմանել ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ:

Փաստորեն, հայեցակարգը մշակողների կողմից իրականացվել է ծանր ու առանձնապես ծանր հանցագործությունների ու քննության ընդհանուր ուսումնասիրություն, ներկայացվել են առանձին տարիների վերաբերյալ որոշակի տվյալներ, սակայն կոռուպցիոն հանցագործությունների հնարավոր

[18] «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքների եվ հարակից օրենքների նախագծերի ընդունման հիմնավորում, https://www.e-draft.am/projects/2644/about

[19] Տե՛ս նույն տեղում:

թվի՝ ընդհանուր քրեական գործերի մեջ դրանց չափաբաժնի և ըստ այդմ ծավալների ու անհրաժեշտ մարդկային ռեսուրսների վերաբերյալ հիմնավորումներ չկան:

Ավելին, հայեցակարգի փաստարկներն ինքնին որոշակի հակասություն են ստեղծում: Մասնավորապես, մի կողմից նշվում է, որ ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով քրեական գործերի քննությունն իրենից զգալի բարդություն է ներկայացնում, սակայն նույն այդ հանցագործությունները քննող դատավորները տարբերակված մոտեցման են ենթարկվում հակակոռուպցիոն դատավորների հետ համեմատությամբ՝ հատկապես աշխատավարձերի համատեքստում:

Մասնավորապես, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում տեղի ունեցած փոփոխությունների համաձայն՝ հակակոռուպցիոն դատարանի դատավորին, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնյայի դրույքաչափի 70 տոկոսի չափով: Նմանապես, վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորներին և վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորներին, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնի դրույքաչափի 60 տոկոսի չափով: Իսկ Վճռաբեկ դատարանի դատավորներին (այդ թվում՝ վճռաբեկ դատարանի նախագահին և վճռաբեկ դատարանի պալատի նախագահին) օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսի չափով[20]:

Օրենքով Հակակոռուպցիոն դատարանի դատավորների աշխատավարձի նման առավելության սահմանումը բացի ոլորտի ռիսկայնությունից, որևէ այլ ողջամիտ բացատրություն չունի, և աշխատավարձի տարբերությունը չի հիմնավորվում: Աշխատավարձի տարբերությունը կարող է լինել կապված դատական ատյանից, կամ ստաժից, սակայն տվյալ պարագայում այս խումբ դատավորներին մի քանի անգամ բարձր աշխատավարձ նախատեսելը նաև ստվեր է գցում, օրինակ, ծանր և առանձնապես ծանր այլ բնույթի քրեական գործեր քննող դատավորների վրա:

Այն մոտեցումը, որ կոռուպցիան համարվում է առանձնակի ռիսկային ոլորտ, չի հիմնավորում նման տարբերությունը, քանի որ ռիսկային են նաև այլ հանցագործությունների ոլորտները:

[20] «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, հոդված 13:

2. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ, ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ, ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Սահմանադրության 166-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից:

Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան պալատի կազմից, վեց տարի ժամկետով: Նույն անձը Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ կարող է նշանակվել միայն մեկ անգամ:

Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից, վեց տարի ժամկետով: Նույն անձը Վճռաբեկ դատարանի նախագահ կարող է ընտրվել միայն մեկ անգամ:

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ: Նույն դատարանների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան դատարանի կազմից, երեք տարի ժամկետով: Դատարանի նախագահն իր պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո՝ երեք տարվա ընթացքում, չի կարող վերստին նշանակվել այդ պաշտոնում:

Դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասներն ու լրացուցիչ կարգավորումները սահմանվում են Դատական օրենսգրքով:

Դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները կազմելու իրավասությունը տրված է Բարձրագույն դատական խորհրդին[21]:

Դատավորների թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է ըստ քրեական, քաղաքացիական, վարչական և հակակոռուպցիոն մասնագիտացումների: Հակակոռուպցիոն թեկնածուների ցուցակի համալրումն իրականացվում է ըստ քրեական, քաղաքացիական, վարչական և հակակոռուպցիոն մասնագիտացումների[22]:

Բարձրագույն դատական խորհրդի որոշման հիման վրա հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է հայտարարություն, որն առնվազն պետք է պարունակի տեղեկություններ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով որակավորման ստուգում անցկացնելու մասին՝ նշելով դիմումների ընդունման ժամկետները և վայրը: Համալրումը համալրման

[21] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 89:
[22] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 95:

ենթակա տեղերի քանակով իրականացվելու դեպքում հայտարարությամբ նշվում է համալրման ենթակա տեղերի քանակը՝ ըստ դատավորների թեկնածուների ցուցակի մասնագիտացման բաժինների[23]:

Որակավորման ստուգումը բաղկացած է *հայտի ներկայացման և ստուգման, գրավոր քննության և հարցազրույցի անցկացման փուլերից*:

Հայտի ներկայացում

Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվել հավակնող անձը (այսուհետ՝ հավակնորդ) որակավորման ստուգման մասին որոշման հրապարակման օրվան հաջորդող օրվանից մեկամսյա ժամկետում որակավորման ստուգմանը մասնակցելու համար Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևի հայտ[24]:

Հայտին կից ներկայացվում են՝

1) անձը հաստատող փաստաթղթի, նույնականացման քարտի պատճենները և էլեկտրոնային փոստի հասցեն.

2) հինգ գունավոր լուսանկար.

3) իր կենսագրական տվյալները պարունակող քարտ.

4) նոտարական կարգով հաստատված բանավոր հայտարարություն իր դատվածության և սնանկության կամ դրանց բացակայության մասին.

5) իրավաբանական կրթության՝ պահանջվող որակավորման աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթ.

6) հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ.

7) պահանջվող օտար լեզուների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ,

8) պահանջվող մասնագիտական աշխատանքի փորձառությունը հավաստող ապացույց, այդ թվում՝ աշխատանքային պարտականությունները հավաստող պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր.

9) արական սեռի հավակնորդի դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ.

10) դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ.

11) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևով համաձայնություն՝ իր վերաբերյալ պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից, հավակնորդին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում, անհրաժեշտ անձնական տվյալներ, այդ թվում՝ բժշկական գաղտնիք հանդիսացող և այլ տեղեկություններ ստանալու մասին.

---

[23] Տե՛ս նույն տեղում:

[24] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 98:

12) առավելագույնը երեք երաշխավորագիր-նամակ՝ ըստ հավակնորդի ցանկության.

13) օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիր.

13.1) բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ.

14) գրավոր հայտարարություն հայտում առկա տեղեկությունների և կից ներկայացված փաստաթղթերի հավաստիության մասին:

Հայտը ներկայացվելուց հետո այն և կից ներկայացված փաստաթղթերը, բացառությամբ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկի, ստուգվում են Դատական դեպարտամենտի կողմից:

Եթե հայտը ներկայացված է սահմանված ժամկետի խախտմամբ կամ չի բավարարում օրենսգրքով նախատեսված պահանջներին, ապա այն մերժվում է Դեպարտամենտի կողմից, ինչը հնարավոր է հավակնորդի կողմից բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ընդունման մերժումը դատարանի կողմից ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում հավակնորդը առանց նոր հայտ ներկայացնելու շարունակում է մասնակցել որակավորման ստուգման հերթական և հաջորդ փուլերին[25]:

Որակավորման գրավոր քննության փուլ

Որակավորման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները, գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը, այդ թվում՝ քննական նյութերի բաշխման, քննության ընթացքի, իրավական կամ այլ փաստաթղթերից կամ տեխնիկական միջոցներից օգտվելու, քննական աշխատանքները գնահատելու կարգը, գրավոր քննության արդյունքներով նվազագույն անցողիկ միավորը (որը չի կարող պակաս լինել ընդհանուր միավորների 60 տոկոսից) սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը յուրաքանչյուր տարի ոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 15-ը[26]:

Գրավոր քննության հարցեր մշակելու համար Բարձրագույն դատական խորհուրդն ընտրում է համապատասխան մասնագետ (մասնագետներ) կամ մասնագիտացված կազմակերպություն:

Որակավորման գրավոր քննության, հարցազրույց անցկացնելու ժամանակի և վայրի մասին հայտարարությունը հրապարակվում է հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական կայքում որակավորման գրավոր քննության կամ հարցազրույցի օրվանից առնվազն 10 օր առաջ:

Որակավորման գրավոր քննությունն անցկացվում է համապատասխանաբար քրեական, քաղաքացիական, վարչական կամ հակակոռուպցիոն մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքների միջոցով, որոնք, բացի տեսական իրավական գիտելիքների ստուգումից, ուղղված են նաև հավակնորդի վերլուծական և իրավակիրառ կարողությունների ստուգմանը:

Ինչպես սահմանված է Դատական օրենսգրքով՝ գրավոր առաջադրանքները կարող են պարունակել իրավական խնդիրներ՝ առաջադրված փաստական հանգամանքների նկատմամբ

[25] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 99:
[26] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 100:

իրավունքի նորմերը վերլուծելու և կիրառելու պահանջով կամ կազմվել թեստային առաջադրանքների՝ հակիրճ իրավական հիպոթետիկ խնդիրների միջոցով՝ դրանց ճիշտ լուծումները հավակնորդի կողմից ընտրելու պահանջով, ինչպես նաև կարող են ներառել հիպոթետիկ գործի ամբողջական փաթեթի ուսումնասիրության հիման վրա՝ դատավարական գործողությունների վերլուծության, դատավարական փաստաթղթերի նախագծման և այլ պահանջներ:

Հակակոռուպցիոն մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքներ մշակելիս կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ փողերի լվացման հիմնահարցերը ներառվում են հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի, իսկ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման գործերին առնչվող հիմնահարցերը՝ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինների համար կազմվող գրավոր առաջադրանքներում:

Գրավոր առաջադրանքները գնահատվում են Բարձրագույն դատական խորհրդի սահմանած գնահատման չափորոշիչներին համապատասխան միավորների սանդղակով: Աշխատանքները ստուգելու և գնահատելու համար Բարձրագույն դատական խորհուրդը ձևավորում է համապատասխան մասնագիտացում ունեցող գնահատման հանձնաժողով:

Հարցազրույցի փուլ

Որակավորման գրավոր փուլի արդյունքները ամփոփելուց հետո Դատական դեպարտամենտը համալրված ցուցակը ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդ՝ հարցազրույց անցկացնելու նպատակով:

Զուգահեռաբար Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում միասնական համալրված ցուցակում ներառված հավակնորդների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկները՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

Միասնական համալրված ցուցակը կազմվում է.

1) գրավոր քննության հանրագումարային արդյունքներով անհրաժեշտ միավորները հավաքած հավակնորդների ցուցակից, իսկ եթե համալրումն իրականացվում է համալրման ենթակա տեղերի քանակով՝ դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժինը համալրելու համար անհրաժեշտ թեկնածուների քանակը 50 տոկոսով, բայց ոչ պակաս, քան հինգով գերազանցող քանակի ամենաբարձր հանրագումարային միավորներ հավաքած հավակնորդների ցուցակից, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան քանակի հավակնորդ չի հավաքել անհրաժեշտ միավորները, և

2) գիտական աստիճան ունեցող հավակնորդների ցուցակից:

Ինչպես նախատեսվում է Դատական օրենսգրքով՝ հարցազրույցի նպատակն է դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար հավակնորդի անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտելը[27]:

Անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտվում են հավակնորդի մասնագիտական աշխատանքի փորձառությունը, դատավոր դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, դատավորի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական հատկանիշները (մասնավորապես՝ ինքնատիրապետում, բարեվարքություն, վարվեցողություն, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառում, պատասխանատվության զգացում, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, արդարամտություն, վերլուծական կարողություններ և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ) գնահատելու միջոցով: Հարցազրույցն անցկացնում է Բարձրագույն դատական խորհուրդը, որին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաև հոգեբան:

Սահմանված նպատակին ամբողջական հասնելու համար՝ հարցազրույցից առաջ՝ հինգ օրվա ընթացքում, հավակնորդներն անցնում են հոգեբանական թեստավորում: Հոգեբանական թեստը կազմվում է օրենքով նախատեսված անձնային հատկանիշները գնահատելու նպատակով, և դրա արդյունքն ստացվում է ըստ նախապես մշակված էլեկտրոնային համակարգի:

Բարձրագույն դատական խորհուրդը հաստատում է հոգեբանական թեստավորման չափանիշները և անցկացման կարգը, որի հիման վրա թեստավորման անցկացման համար անհրաժեշտ պայմաններն ապահովում է Լիազոր մարմինը /Դատական դեպարտամենտ/: Թեստի արդյունքներն ունեն խորհրդատվական նշանակություն, տրամադրվում են հավակնորդին և Բարձրագույն դատական խորհրդին:

Հարցազրույցը կազմված է երկու մասից[28]՝

1) յուրաքանչյուր հավակնորդի անձնական գործի, ներառյալ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած խորհրդատվական եզրակացության և անցած մասնագիտական փորձի ուսումնասիրություն, որը ներկայացնելու համար Բարձրագույն դատական խորհրդի անդամներից մեկը խորհրդում հանդես է գալիս որպես զեկուցող:

2) դատավորի վարքագծի կանոններին վերաբերող հիպոթետիկ խնդրի վերաբերյալ հավակնորդի կողմից իրականացվող վերլուծություն և դիրքորոշման ներկայացում՝ դատավորի վարքագծի հիմնարար կանոնների, դատավորին ներկայացվող պահանջների և որպես դատավոր գործելու համար կարևոր այլ անձնական հատկանիշները գնահատելու համար:

Յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցի առավելագույն տևողությունը մեկուկես ժամ է:

Բոլոր հավակնորդների հարցազրույցների ավարտից հետո Բարձրագույն դատական խորհրդի անդամներն իրականացնում են հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկում, որին հաջորդում է քվեարկությունը:

---

[27] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 108:

[28] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 108, մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը կատարված փոփոխությունների բովանդակությամբ:

Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

Բարձրագույն դատական խորհրդում հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման ավարտից հետո անցկացվում է բաց քվեարկություն՝ խորհրդակցական սենյակում քվեարկություն, որի ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»:

Յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկության արդյունքներով Բարձրագույն դատական խորհրդի կողմից կազմվում է դատավորների թեկնածուների հավակնորդների, իսկ հակակոռուպցիոն մասնագիտացման դեպքում՝ ըստ ենթաբաժինների ցուցակ:

Բարձրագույն դատական խորհուրդը որակավորման ստուգման արդյունքների հիման վրա կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը և այն ներկայացնում Արդարադատության ակադեմիա՝ նրանց ուսուցումը կազմակերպելու նպատակով:

Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրումը

Դատական օրենսգրքով տրված են նաև վերաքննիչ դատարանում դատավորների նշանակման ընթացակարգերը: Ըստ օրենսգրքի կարգավորումների՝ Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակի համալրման անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով նաև վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակում առկա դատավորների թեկնածուների քանակը, վերաքննիչ դատարանների առկա և կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը և այլ այնպիսի հանգամանքներ, որոնք հանգեցնում կամ կարող են հանգեցնել դատավորների առաջխաղացման ցուցակի համալրման անհրաժեշտության:

Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակում ըստ այդմ կարող են ընդգրկվել՝

1) համապատասխան մասնագիտացման առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն ունեցող դատավորը, որը չունի կարգապահական տույժ՝ նկատողության կամ խիստ նկատողության ձևով.

2) վերջին 10 տարվա ընթացքում պաշտոնավարած նախկին դատավորը, որն ունի դատավորի առնվազն հինգ տարվա փորձառություն.

3) այն անձը, որը՝

ա) ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և վերջին ութ տարիների ընթացքում առնվազն վեց տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդել է իրավունք կամ գիտական աշխատանք է կատարել գիտական հաստատությունում, կամ

բ) ունի վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն:

Դատական օրենսգիրքը նախատեսում է նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից ցուցակի համալրման վերաբերյալ որոշման կայացման ընթացակարգը: Մասնավորապես, դիմումներ ընդունելու ժամկետի ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, Բարձրագույն դատական խորհուրդն իր նիստում ուսումնասիրում է թեկնածուի անձնական գործը, իսկ թեկնածուի՝ դատավոր չլինելու դեպքում նրա ներկայացրած և դրանց ստուգման արդյունքով ձեռք բերված փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում հրավիրում նրանց զրույցի:

Բարձրագույն դատական խորհուրդն առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը կազմելիս հաշվի է առնում վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ հմտություններն ու որակները, իսկ դատավորի համար նաև գործունեության գնահատման արդյունքները: Բարձրագույն դատական խորհուրդն անցկացնում է խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկություն, որի ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»:

Նախ պետք է արձանագրել, որ օրենքը վերաքննիչ դատարանի դատավորներին ներկայացվող պահանջների հարցում ցուցաբերել է մեղմ մոտեցում՝ հատկապես դատավոր չհանդիսացող մասնագետների առնչությամբ: Ինչպես կարելի է նկատել, դատավորի կարգավիճակ չունեցող անձինք հեշտացված ընթացակարգով կարող են համալրել վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնը, քանզի ներկայացված են ոչ խիստ պահանջներ: Մինչդեռ հատկապես վերաքննիչ դատարանում հակակոռուպցիոն գործեր քննող դատավորներին ներկայացվող պահանջները պետք է առավել խիստ լինեն:

Ավելին, հստակ չեն օրենքով սահմանված վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար «անհրաժեշտ հմտություններն ու որակները» գնահատելու չափանիշները և հանգամանքները: Նման պահանջի պարագայում պարզ չէ, թե Խորհրդի անդամները ինչ հանգամանքներ են հաշվի առնում, ինչպես և ինչ չափանիշների հիման վրա են գնահատում հմտության և որակների առկայությունը կամ բացակայությունը: Այսինքն, նման կարգավորման պայմաններում Խորհրդի յուրաքանչյուր անդամ ստանում է հայեցողական գնահատման և սուբյեկտիվ լայն մեկնաբանության հնարավորություն, ինչը վերջնական որոշման հիմնավորվածության առումով թերի ու խնդրահարույց է:

Խնդրահարույց է նաև այն կարգավորումը, համաձայն որի՝ Խորհուրդը թեկնածուին անհրաժեշտության դեպքում կարող է հրավիրել զրույցի: Հասկանալի չէ, թե որ դեպքերում է նման անհրաժեշտությունն ի հայտ գալիս, որն է զրույցի նպատակը և ինչ հարցեր են քննարկվում զրույցի ընթացքում: Իրավական անորոշությունից խուսափելու համար, օրենքը պետք է սահմանի զրույցի անցկացնելու անհրաժեշտության որոշակի և կանխատեսելի հիմքեր, ինչպես նաև Խորհրդի կողմից զրույցին քննարկվող հարցերի շրջանակը:

Ինչպես Վերաքննիչ, այնպես էլ Վճռաբեկ դատարանում դատավորների համալրման գործընթացի առնչությամբ առկա է ևս մեկ խնդիր, կապված այն հանգամանքի հետ, որ այս ատյաններում Խորհրդի կողմից թեկնածուների ընտրության գործընթացը ազատված է հանրային վերահսկողության որևէ հնարավորությունից: Ի տարբերություն առաջին ատյանի դատարանի

դատավորների ցուցակի համալրման գործընթացի, որտեղ հնարավոր է դիտորդության իրականացում, Խորհրդի կողմից վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատավորների թեկնածուների ցուցակի կազմման դեպքում նման հնարավորություն նախատեսված չէ: Մինչդեռ հաշվի առնելով այս ատյանների դերն ու լիազորությունների շրջանակը՝ անհրաժեշտ է նախատեսել մշտադիտարկման հնարավորություն:

Իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձի ընտրությունը

ՀՀ Դատական օրենսգրքի 106-րդ հոդվածի համաձայն իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող և վերջին տասը տարիների ընթացքում առնվազն հինգ տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում և (կամ) «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամում իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած անձը (այսուհետ՝ գիտական աստիճան ունեցող հավակնորդ), որը բավարարում է սույն օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, իրավունք ունի դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու հայտ ներկայացնելու Բարձրագույն դատական խորհուրդ:

Նույն հոդվածի կարգավորումների համաձայն՝ հայտը ստուգելուց հետո թեկնածուն անցնում է որակավորման բանավոր հարցազրույցի փուլ:

Այսինքն, այս խումբ թեկնածուների համար օրենսդիրը սահմանել է հեշտացված կարգ, ինչը խնդրահարույց է մի քանի պատճառներով: Նախ օրենսդիրը չի հստակեցրել, թե հատկապես որ ոլորտի գիտական աստիճան ունեցող անձանց է կարգը վերաբերում, ինչի պայմաններում իրավունքի ցանկացած նեղ ճյուղային և ոլորտային գիտական աստիճան ունեցող անձը կարող է նման արտոնություն ունենալ, մինչդեռ մասնագիտական կարողություններով էապես զիջել մնացած հավակնորդներից: Ավելին, հատկապես մասնագիտացված դատարանների դատավորների պարագայում, մասնավորապես հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար, օրենսդիրը պետք է նախատեսի ընդհանուր ընթացակարգ, որը թույլ կտա գնահատել ոլորտային կարողություններն ու համապատասխանությունը պաշտոնին:

Բարեվարքության ստուգումը դատավորների ընտրության և նշանակման շրջանակներում

Դատավորների ընտրության և նշանակման գործընթացում առանձնակի դերակատարում ունի թեկնածուների բարեվարքության ստուգումը, որը Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին ներդրված ինստիտուտ է:

Բարեվարքության հետ կապված հարցերը կարգավորվում են Դատական օրենսգրքով և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքով:

Բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացումը նախատեսված է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքի 26.1 հոդվածով:

Մասնավորապես, բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում լրացման ենթակա են հետևյալ տվյալները՝

1) թեկնածուի և «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով նրա ընտանիքի անդամների գույքային դրության՝ գույքի և եկամուտի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն.

2) թեկնածուի կրթության, աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ ուսումնական հաստատության, աշխատավայրի (նախկին և ներկա) անվանումը (անվանումները), զբաղեցրած պաշտոնը (պաշտոնները).

3) քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ տեղեկատվություն.

4) «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց հետ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված լինելու վերաբերյալ տեղեկատվություն.

5) քրեական ենթամշակույթին հարելու վերաբերյալ տեղեկատվություն:

Բարեվարքության ուսումնասիրությունը ներառում է՝

1) բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատության ստուգում.

2) անձի կողմից նախկինում քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքի, այդ թվում՝ կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, նրա կողմից վարքագծի կանոնների պահպանման, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտում կատարած լինելու հանգամանքների ուսումնասիրություն.

3) անձի վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունների ուսումնասիրություն.

4) անձի գույքային դրության՝ փաստացի ստացած եկամուտներին համապատասխանության, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրություն.

5) անձի աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն.

6) անձի քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն:

Բարեվարքության ստուգման արդյունքներն ու Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ըստ այդմ տրվող եզրակացությունները հետագայում հաշվի են առնվում Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելիս:

Մասնավորապես, Դատական օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

3. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննությունները սկսվել են 2022 թվականի հունվար ամսից:

Մասնավորապես, հունվարի 10-ին տեղի է ունեցել դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացման ենթաբաժինն արտահերթ համալրելու որակավորման քննությունը, իսկ հաջորդ օրը՝ հունվարի 11-ին քրեական գործերով մասնագիտացման ենթաբաժինն արտահերթ համալրելու որակավորման քննությունը: Ինչպես նախատեսված է ՀՀ Դատական օրենսգրքով՝ որակավորման ստուգման վերաբերյալ հայտարարությունները վերը նշված երկու քննությունների պարագայում նախապես հրապարակվել է դատական իշխանության պաշտոնական կայքում, ինչը ներառել է նաև տեղեկություն քննության անցկացման տեղի և ժամի մասին[29]: Նույն տեղեկությանը կից հրապարակվել են նաև գրավոր առաջադրանքների նմուշ-օրինակները[30]:

Ձեկույցում հաջորդիվ ներկայացվում են գործընթացի արդյունքները՝ այն համադրելով օրենսդրական կարգավորումների և միջազգային չափանիշների հետ:

Ընդհանուր տեղեկություններ որակավորման գրավոր քննությունների կազմակերպման և ընթացքի վերաբերյալ

Որակավորման գրավոր քննությունները անց են կացվել Երևանի պետական համալսարանում՝ դրա համար հստակեցված դահլիճում: Դահլիճին կից հատկացված է եղել առանձին սենյակ գրավորների հանձնման գործընթացը կազմակերպելու համար: Գործընթացին որպես պատասխանատու և կազմակերպիչ մասնակցել են Դատական դեպարտամենտի համապատասխան ներկայացուցիչներ:

Որակավորման քննությունների ողջ գործընթացը տեսանկարահանվել է Բարձրագույն դատական խորհրդի կողմից և համապատասխան էկրանի միջոցով հնարավոր է եղել գործընթացին հետևել հարակից միջանցքից ևս: Որպես դիտորդ՝ Կազմակերպությունը կարողացել է ներս մտնել և որակավորման գործընթացին հետևել նաև բուն քննական սենյակից:

---

[29] ԲԴԽ Հայտարարություն դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության ժամանակի եվ վայրի, ինչպես նաեվ գրավոր քննության առաջադրանքների նմուշ-օրինակների մասին, 24.12.2021թ. https://court.am/hy/official-inner/251; ԲԴԽ Հայտարարություն առաջին ատյանի դատարաններում դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի, քրեական եվ քաղաքացիական մասնագիտացման բաժինների համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության ժամանակի եվ վայրի, ինչպես նաեվ գրավոր քննության առաջադրանքների նմուշ-օրինակների մասին,12.05.2021թ.https://court.am/hy/official-inner/294?fbclid=IwAR1Cq6CsNYbU4I38EWZ3Q6w5S8nvCRyD3NE5yr5VfXl_y7sqK715aTcP3TQ

[30] Տե՛ս նույն տեղում:

Քաղաքացիական մասնագիտացման հակակոռուպցիոն բաժնի համար դիմել է 12 հավակնորդ, քրեական մասնագիտացման բաժնի համար՝ 27 հավակնորդ:

Մինչև քննական սենյակ մտնելը հավակնորդները սահմանված կարգով քննության կազմակերպիչներին են հանձնել արգելված իրերը, ինչպիսիք են՝ հեռախոս, թղթեր, անձնական գրիչ, պայուսակ, հեռահաղորդակցման և համակարգչային սարքերը:

Հավակնորդները քննական սենյակում իրենց տեղերը զբաղեցրել են վիճակահանության միջոցով, ինչից հետո դատական դեպարտամենտի համապատասխան ներկայացուցիչը բոլոր մասնակիցներին ներկայացրել է որակավորման գրավոր քննության անցկացման կարգը: Վերջինիս համաձայն՝ որակավորման գրավոր քննությունն սկսվում է ժամը 10:00-ին, քննության ընդհանուր տևողությունը նախատեսված է եղել 6 ժամ, ինչը քննական առաջադրանքները ավարտելու համար ողջամիտ ժամանակ է:

Քննական աշխատանքը ավարտելուց հետո դատական դեպարտամենտի աշխատակիցների կողմից ստուգվել են քննական աշխատանքները, այն մասով, որ ավելորդ նշումներ կամ տարբերվող նշաններ չլինեն: Լինելու դեպքում, այդ առաջադրանքները հավակնորդի կողմից նույնությամբ արտագրվել են և նորից տպվել:

Ըստ դիտարկման արդյունքների՝ քննական առաջադրանքները ամփոփելիս որևէ տեխնիկական խնդիր չի արձանագրվել:

Որակավորման քննությունների արդյունքները հրապարակվել են երկու օր անց՝ հունվարի 12-ին[31]:

Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով ենթաբաժինն արտահերթ համալրելու նպատակով 10.01.2022 թվականին անցկացված որակավորման գրավոր քննությանը մասնակցած 12 հավակնորդներից թվով 7 անձ (58%) գրավոր քննության արդյունքների վերաբերյալ ներկայացրել է բողոք, ինչի արդյունքում տեղի է ունեցել միավորների վերանայում[32]:

Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով ենթաբաժինն արտահերթ համալրելու նպատակով անցկացված որակավորման գրավոր քննությանը մասնակցած 27 հավակնորդներից 6-ի (22%) կողմից գրավոր քննության արդյունքների վերաբերյալ ներկայացվել են բողոքներ, ինչի արդյունքում կրկին տեղի է ունեցել միավորների վերանայում[33]:

---

[31]ԲԴԽ Հայտարարություն Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացման ենթաբաժինն արտահերթ համալրելու նպատակով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքում հավակնորդների ստացած միավորների վերաբերյալ, 12.01.2022թ. https://court.am/hy/official-inner/255

ԲԴԽ, Հայտարարություն, ատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով ենթաբաժինն արտահերթ համալրելու նպատակով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքում հավակնորդների ստացած միավորների վերաբերյալ, 13.01.2022թ. https://court.am/hy/official-inner/256:

[32] ԲԴԽ, Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով ենթաբաժինն արտահերթ համալրելու նպատակով անկացված որակավորման գրավոր քննության բողոքարկման արդյունքները, 19.01.2022թ. https://court.am/hy/official-inner/260

[33] ԲԴԽ, Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով ենթաբաժինն արտահերթ համալրելու նպատակով անկացված որակավորման գրավոր քննության բողոքարկման արդյունքները, 20.01.2022թ. https://court.am/hy/news/651

2022թ. հունվարի 21-ին հրապարակվել է հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով ենթաբաժնի համալրման նպատակով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքներով հարցազրույցի փուլ անցած հավակնորդների միասնական համալրված ցուցակը[34]:

Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով ենթաբաժինն արտահերթ համալրելու նպատակով անցկացված որակավորման գրավոր փուլի ամփոփման արդյունքում հարցազրույցի փուլ են անցել թվով 18 (դիմածների 67%) հավակնորդներ:

Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով ենթաբաժինն արտահերթ համալրելու նպատակով անցկացված որակավորման գրավոր փուլի ամփոփման արդյունքում հարցազրույզի փուլ են անցել թվով 5 (դիմածների 42%) հավակնորդներ:

Կազմակերպության կողմից դիտարկված հաջորդ՝ մայիսի 24-ին տեղի ունեցած հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի համալրման նպատակով անցկացված գրավոր քննությանը մասնակցել են 5 հավակնորդներ, որոնցից հարցազրույցի փուլ անցել են 4-ը[35]:

Որակավորման գրավոր քննության առաջադրանքը

ՀՀ Դատական օրենսգրքի 103-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ որակավորման գրավոր քննությունն անցկացվում է համապատասխանաբար քրեական, քաղաքացիական, վարչական կամ հակակոռուպցիոն մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքների միջոցով, որոնք, բացի տեսական իրավական գիտելիքների ստուգումից, ուղղված են նաև հավակնորդի վերլուծական և իրավակիրառ կարողությունների ստուգմանը:

Նույն հոդվածի համաձայն՝ գրավոր առաջադրանքները կարող են պարունակել իրավական խնդիրներ՝ առաջադրված փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմերը վերլուծելու և կիրառելու պահանջով կամ կազմվել թեստային առաջադրանքների՝ հակիրճ իրավական հիպոթետիկ խնդիրների միջոցով՝ դրանց ճիշտ լուծումները հավակնորդի կողմից ընտրելու պահանջով, ինչպես նաև կարող են ներառել հիպոթետիկ գործի ամբողջական փաթեթի ուսումնասիրության հիման վրա՝ դատահիրավական գործողությունների վերլուծության, դատավարական փաստաթղթերի նախագծման և այլ պահանջներ: Գրավոր քննությունը կարող է անցկացվել տարբեր օրերի ընթացքում տարբեր առաջադրանքներ ներկայացնելու միջոցով:

---

[34] ԲԴԽ, Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով ենթաբաժինն արտահերթ համալրելու նպատակով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքներով հարցազրույցի փուլ անցած հավակնորդների միասնական համալրված ցուցակ, 21.01.2022թ. https://court.am/hy/official-inner/263;Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով ենթաբաժինն արտահերթ համալրելու նպատակով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքներով հարցազրույցի փուլ անցած հավակնորդների միասնական համալրված ցուցակ, 21.01.2022թ. https://court.am/hy/official-inner/264

[35] ԲԴԽ, Միասնական համալրված ցուցակ դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի համալրման նպատակով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքներով հարցազրույցի փուլ անցած հավակնորդների, https://court.am/hy/official-inner/301:

Հակակոռուպցիոն մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքներ մշակելիս կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ փողերի լվացման հիմնահարցերը ներառվում են հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի, իսկ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման գործերին առնչվող հիմնահարցերը՝ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինների համար կազմվող գրավոր առաջադրանքներում:

Ի լրումն ՀՀ Դատական օրենսգրքի նշված կարգավորումների՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից մշակվել է նաև համապատասխան կարգ[36]:

Դատական օրենսգրքի և Կարգի համաձայն՝ գրավոր քննության հարցեր մշակելու համար Բարձրագույն դատական խորհուրդն ընտրում է համապատասխան մասնագետ/մասնագետներ կամ մասնագիտացված կազմակերպություն: Ըստ Կարգի՝ ընտրված համապատասխան մասնագետը (մասնագետները) կամ մասնագիտացված կազմակերպությունը հակակոռուպցիոն մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքներ մշակելիս կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ փողերի լվացման հիմնահարցերը ներառում են հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի, իսկ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման գործերին առնչվող հիմնահարցերը՝ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինների համար կազմվող գրավոր առաջադրանքներում: Բացի այդ, Բարձրագույն դատական խորհրդի կողմից համապատասխան որոշմամբ հարցեր մշակող մասնագետին (մասնագետներին) կամ մասնագիտացված կազմակերպությանը կարող են ներկայացվել այլ պահանջներ, որոնց պետք է համապատասխանեն կազմվող թեստերը:

Պետք է նկատել, սակայն, որ Կարգով և Դատական օրենսգրքով հստակեցված չէ ոչ մասնագետից կամ մասնագիտացված կազմակերպությունից պահանջվող չափանիշները, ոչ էլ Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան ընտրության որոշման հիմքում դրվող չափանիշ-պահանջները:

Կարգը նաև սահմանում է, որ քննության հարցերը մշակելու համար համապատասխան մասնագետ կամ մասնագիտացված կազմակերպություն ընտրելու վերաբերյալ Խորհրդի որոշումը ենթակա չէ հրապարակման: Ստորագրվելուց հետո այն հանձնվում է Դատական դեպարտամենտի ղեկավարին կամ Դատական դեպարտամենտի՝ Խորհրդի կողմից լիազորված ներկայացուցչին: Խորհրդի անդամները, Դատական դեպարտամենտի ղեկավարը, Լիազոր ներկայացուցիչը, ինչպես

[36] ԲԴԽ, Դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի որակավորման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները և գրավոր առաջադրանքների տարբերակների քանակը, որակավորման գրավոր քննության հարցերի մշակման կարգը, որակավորման գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը, քննական աշխատանքները ստուգելու և գնահատելու կարգը, գնահատման չափորոշիչները և գնահատման սանդղակը, որակավորման գրավոր քննության արդյունքների ստուգաթերթի ձևը, քննության արդյունքների բողոքարկման և հանձնաժողովի ձևավորման կարգը սահմանելու մասին ԲԴԽ-98-Ո-281 որոշում, https://court.am/storage/uploads/files/bdx-decisions/Sv1MejaHkrUVrje68vjrkhV2WLCiU62wFuwHXK34.pdf

նաև մասնագիտացված կազմակերպության ղեկավարը կամ համապատասխան մասնագետները պարտավոր են չբացահայտել Քննության հարցերը մշակող մասնագետի (մասնագետների) անձը կամ մասնագիտացված կազմակերպությանը:

Ըստ նույն կարգավորումների՝ տվյալ մասնագիտացման ոլորտում նյութական իրավունքի և դատավարական իրավունքին առնչվող թեստային առաջադրանքների մշակումը կարող է հանձնարարվել միևնույն մասնագետին: Քննության թեստային առաջադրանքները մշակողը պարտավոր է գաղտնի պահել դրանց բովանդակությունը և պատասխանները, ինչպես նաև որևէ այլ ձևով չնպաստել հավակնորդի կողմից քննության հարցերին պատասխանելուն:

Եթե քննության թեստային առաջադրանքների մշակումը հանձնարարվել է մասնագիտացված կազմակերպության, դրանց գաղտնիությունն ապահովելու համար պատասխանատու է համապատասխան մասնագիտացված կազմակերպության ղեկավարը և այն մասնագետը, ով տվյալ կազմակերպության կողմից ներգրավվել է հարցերի մշակմանը:

Դատական դեպարտամենտը, իսկ թեստային առաջադրանքների մշակումը մասնագիտացված կազմակերպությանը հանձնարարված լինելու դեպքում՝ այդ կազմակերպության ղեկավարը մասնագետից ստորագրություն է վերցնում դատավորների որակավորման քննության թեստային առաջադրանքների գաղտնիությունը դիտավորությամբ խախտելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելու մասին:

Օրենսդրի և հետագայում նաև Կարգի նման կարգավորման նպատակը ըստ էության գաղտնիության ապահովումն ու հնարավոր ազդեցություններից մասնագետ/ներին զերծ պահելն է: Սակայն պարզ չէ, արդյոք սահմանված կարգավորումները բավարար են պրակտիկայում ապահովել այդ երաշխիքները կամ ինչպիսի մեխանիզմ է գործում գաղտնիության խախտման հնարավոր դեպքերը բացահայտելու համար:

Ինչպես արդեն ներկայացվեց, Բարձրագույն դատական խորհրդի կողմից նախապես հրապարակվել է ինչպես կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով գրավոր քննության առաջադրանքների, այնպես էլ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացման գրավոր քննության առաջադրանք նմուշ-օրինակները[37]:

Ներկայացված նմուշ-օրինակներից երևում է, որ կազմված առաջադրանքների բովանդակությունը ամբողջությամբ չի արտահայտում օրենքով գրավոր առաջադրանքների համար նախատեսված նպատակները: Մասնավորապես, վկայակոչված հոդվածի առաջին մասը հստակ

[37] Կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով գրավոր քննության առաջադրանքի նմուշ-օրինակ https://court.am/storage/uploads/files/news/%D5%86%D5%B4%D5%B8%D6%82%D5%B7-%D6%85%D6%80%D5%AB%D5%B6%D5%A1%D5%AF%20%D4%BF%D5%88%D5%8C%D5%88%D5%92%D5%8A%D5%91%D4%BB%D5%88%D5%86%20%D5%80%D4%B1%D5%86%D5%91%D4%B1%D4%B3%D5%88%D5%90%D4%BE%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D5%88%D5%92%D5%86%D5%86%D4%B5%D5%90%D4%BB%20%D5%94%D5%86%D5%86%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D4%B1%D5%86%20%D4%B3%D5%88%D5%90%D4%BE%D4%B5%D5%90%D5%88%D5%8E.pdf%2024.12.2021.pdf
Հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացման գրավոր քննության առաջադրանքի նմուշ-օրինակ,https://court.am/storage/uploads/files/news/%D5%86%D5%B7%D5%B8%D6%82%D5%B7-%D6%85%D6%80%D5%AB%D5%B6%D5%A1%D5%AF%20%D5%80%D4%B1%D4%BF%D4%B1%D4%BF%D5%88%D5%8C%D5%88%D5%92%D5%8A%D5%91%D4%BB%D5%88%D5%86%20%D5%94%D4%B1%D5%82%D4%B1%D5%94%D4%B1%D5%91%D4%BB%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86%20%D4%B3%D5%88%D5%90%D4%BE%D4%B5%D5%90%D5%88%D5%8E%20%D5%84%D4%B1%D5%8D%D5%86%D4%B1%D4%B3%D4%BB%D5%8F%D4%B1%D5%91%D5%84%D4%B1%D5%86.pdf

սահմանում է, որ բացի տեսական իրավական գիտելիքների ստուգումից, առաջադրանքներն ուղղված են նաև հավակնորդի վերլուծական և իրավակիրառ կարողությունների ստուգմանը: Այս առումով օրենքը սահմանում է այլընտրանք՝ կամ իրավական խնդիրներ, կամ թեստային առաջադրանքներ: Երկրորդի պարագայում հավակնորդի մոտ վերլուծական կարողությունների ստուգումը և պարզումը ավելի բարդ է, քանի որ հավակնորդը ուղղակի ընտրում է թեստով տրված պատասխաններից մեկը՝ առանց վերլուծության, մտքի շարադրման և մտածողության ստուգման:

Ավելին, հաշվի առնելով, որ խոսքը վերաբերում է պատասխանատու պաշտոնի հավակնորդ անձանց կարողությունների ստուգմանը, քան սոսկ ակադեմիական քննական ստուգումն է, անհրաժեշտ է որակավորման քննությունների առաջադրանքները կազմել այնպես, որ իսկապես հնարավոր լինի ստուգել հավակնորդի մտածողությունն ու վերլուծական կարողությունները:

Ավելին, արձանագրվել են խնդիրներ քննարկվող ժամանակահատվածում որակավորման ստուգման ընթացքում տրված առաջադրանքների բովանդակության առնչությամբ ևս: Մասնավորապես, կապված այն հարցի հետ, թե ինչքանով են առաջադրանքները բխում հատկապես հակակոռուպցիոն մասնագիտացումից և ներառում կոռուպցիայի դեմ պայքարի և կոռուպցիոն գործերի քննության համար անհրաժեշտ կարողություններ:

Ինչպես արդեն ներկայացվեց վերևում, օրենքը նախատեսում է, որ հակակոռուպցիոն մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքներ մշակելիս կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ փողերի լվացման հիմնահարցերը ներառվում են հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի, իսկ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման գործերին առնչվող հիմնահարցերը՝ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինների համար կազմվող գրավոր առաջադրանքներում:

Նման պահանջը ենթադրում է, որ թե նյութական իրավունքի, թե դատավարական իրավունքի թեստային առաջադրանքները պետք է ներառեն հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն գործերի քննության համար անհրաժեշտ հմտությունները ստուգող հարցեր:

Մինչդեռ, ինչպես արձանագրվել է, որակավորման ստուգման քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի դատավարական իրավունքի թեստը չի համապատասխանել օրենսգրքով սահմանված պահանջներին և ներառված են եղել հարցեր, որոնք ընդհանրապես չեն բխել այդ մասնագիտացման բաժնին անհրաժեշտ կարողություններից: Քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի դատավարական իրավունքի թեստի 30 հարցերից և ոչ մեկը չի հանդիսացել պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման գործերին առնչվող դատավարական հիմնահարց, ինչն ուղղակիորեն հակասում է սահմանված պահանջին: 30 հարցից 13 հարցը առնվազն առաջնային կարգով չէր կարող ներառվել թեստային առաջադրանքում այն պատճառով, որ դուրս էր հակակոռուպցիոն մասնագիտական դատարանի լիազորության սահմաններից, հետևաբար՝ նշված հարցերով որևէ կերպ չէր կարող բացահայտվել

մասնագիտացված դատարանի դատավորի համար կազմակերպվող մրցույթում հավակնորդի՝ տվյալ ոլորտում ունեցած գիտելիքներն ու հմտությունները[38]: Օրինակ, ներառված հարցերից է՝

«Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ի՞նչ փաստաթուղթ պարտադիր չէ կցել որդեգրման դիմումին.

Ա) հոգաբարձության տակ գտնվող երեխայի հոգաբարձուի գրավոր համաձայնությունը

Բ) առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանք

Գ)այնպիսի եկամտի վերաբերյալ տեղեկանք, որը կապահովի որդեգրվող երեխայի նվազագույն կենսապայմանները

Դ) որդեգրել ցանկացող անձի ամուսնության վկայականի պատճենը, եթե որդեգրել ցանկացող անձը ամուսնության մեջ է»:

Ըստ էության, որդեգրման և նմանատիպ հարցերը ուղղակիորեն չեն բխել հակակոռուպցիոն քաղաքացիական մասնագիտացման բաժնի նպատակներից:

Պետության ընդհանուր քաղաքականությունը միտված էր նրան, որ հատուկ մասնագիտացված դատարան ստեղծելով, ստեղծվում է նաև հատուկ կարողություններ ու հմտություններ ունեցող մասնագետներով դատարան, մինչդեռ եթե ստուգումը նման կարգով պետք է ընթանա, ապա առհասարակ նման դատարան ստեղծելու անհրաժեշտությունն է դրվում կասկածի տակ, քանի որ որոշակի խումբ դատավորների ի լրումն իրենց արդեն իսկ ունեցած հմտությունների, կարող էին առավել մասնագիտանալ հակակոռուպցիոն գործերի քննության մեջ:

Արդյունքների բողոքարկման ժամկետը

Արձանագրված մեկ այլ խնդիր կապված է վերը ներկայացված որակավորման քննությունների արդյունքների բողոքարկման ժամկետի հետ, մասնավորապես՝ այն հարցի հետ, որ օրենսգրքով սահմանված բողոքարկման ժամկետը Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ փոխվել և կրճատվել է:

Այսպես, ՀՀ Դատական օրենսգրքի 105.1 հոդվածի համաձայն՝ գրավոր քննության արդյունքները կարող են բողոքարկվել բողոքարկման հանձնաժողով՝ դրանք հրապարակելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում: Համապատասխան մասնագիտացմամբ բողոքարկման հանձնաժողովը կազմավորվում է տվյալ մասնագիտացմամբ քննության արդյունքների դեմ առաջին բողոքն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, երկու դատավորի և մեկ իրավաբան գիտնականի կազմով, որոնք վիճակահանությամբ ընտրվում են Ուսումնական հարցերի հանձնաժողովի կողմից առաջարկված տվյալ մասնագիտացման հինգ և Լիազոր մարմնի կողմից առաջարկված իրավունքի համապատասխան բնագավառի առնվազն երեք իրավաբան գիտնականի թեկնածուների կազմից՝ նրանց համաձայնությամբ: Գնահատման հանձնաժողովի անդամները չեն կարող ընդգրկվել բողոքարկման հանձնաժողովի կազմում:

[38] 168.am, ԲԴԽ-ն դուրս է եկել իր լիազորությունների սահմաններից.. քրեաիրավական գնահատական կտրվի՞, 11.02.2022թ.https://168.am/2022/02/11/1651701.html?fbclid=IwAR2JBRGq6DLgj_ByAT5BwoNTyQmnu-opJD4BcPzpaOVVTx1DsMmgRt0C_xY

Քննարկվող քննության արդյունքների բողոքարկման իրավունքի իրացման առնչությամբ արձանագրվել է խնդիր, քանի որ օրենսգրքով սահմանված այդ ժամկետը Խորհրդի կողմից չի պահպանվել և ներկայացված բողոքները քննարկվել են առանց սահմանված 15-օրյա ժամկետի ավարտին սպասելու: Արդյունքում, պոտենցիալ մեկ այլ բողոքարկող չի կարողացել իրականացնել օրենսգրքով նախատեսված իր համապատասխան իրավունքը, քանի որ Խորհուրդը ժամկետը կրճատել է[39]:

Որակավորման ստուգման հոգեբանական թեստավորում եւ հարցազրույցի փուլ

Վերը ներկայացված հավակնորդները, ովքեր անցել են հարցազրույցի փուլ, մինչ հարցազրույցի փուլի իրականացումը, Դատական օրենսգրքով սահմանված կարգով անցել են հոգեբանական թեստավորում[40]:

Հոգեբանական թեստը կազմվում է հավակնորդի՝ դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտելու համար: Մասնավորապես, հավակնորդի դատավոր դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, դատավորի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջների տեղեկացվածությունը, անձնական հատկանիշները՝ ինքնատիրապետում, բարեվարքություն, վարվեցողություն, հեղինակության չափավոր կիրառում, պատասխանատվության զգացում, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, արդարամտություն, վերլուծական կարողություններ և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ: Հոգեբանական թեստի արդյունքը ստացվում է ըստ նախապես մշակված էլեկտրոնային համակարգի:

Հոգեբանական թեստավորման չափանիշները և անցկացման կարգը հաստատում է Բարձրագույն դատական խորհուրդը, իսկ թեստավորման տեխնիկական մասը ապահովում է Դատական դեպարտամենտը: Ըստ կարգավորումների՝ թեստի արդյունքները խորհրդատվական են, տրամադրվում են հավակնորդին և Բարձրագույն դատական խորհրդին:

Ի հավելումն Դատական օրենսգրքի կարգավորումների՝ Խորհրդի վերը նշված կարգը մասնավորեցնում է դատավորի թեկնածուների հավակնորդների հոգեբանական թեստավորման չափանիշները[41]:

Ըստ վերոնշյալ կարգի՝ Հոգեբանական թեստավորման արդյունքում գնահատվում են դատավորի թեկնածուների հավակնորդների հետևյալ հատկանիշները.

1) դատավոր դառնալու շարժառիթն ու ակնկալիքը,

2) ինքնատիրապետումը,

3) բարեվարքությունը,

4) վարվեցողությունը,

---

[39] 168.am, ԲԴԽ-ն դուրս է եկել իր լիազորությունների սահմաններից.. քրեաիրավական գնահատական կտրվի՞, 11.02.2022թ.https://168.am/2022/02/11/1651701.html?fbclid=IwAR2JBRGq6DLgj_ByAT5BwoNTyQmnu-opJD4BcPzpaOVVTx1DsMmgRt0C_xY

[40] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 108:

[41] Դատավորի թեկնածուների հավակնորդների հոգեբանական թեստավորման չափանիշները, 2020թ օգոստոսի 31-ի թիվ ԲԴԽ-57-Ն-11 որոշման Հավելված 1, 31.08.2020թ.https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145751

5) հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառման ունակությունը,

6) պատասխանատվության զգացումը,

7) ունկնդրելու կարողությունը,

8) հաղորդակցման հմտությունները,

9) արդարամտությունը:

Դատավորի թեկնածուների հավակնորդների՝ վերոնշյալ հատկանիշները գնահատվում են միջազգային պրակտիկայում ընդունելի համարվող և կիրառվող հոգեբանական թեստերի համակցության միջոցով, որոնցով հնարավոր է ստուգել հավակնորդի՝

1)Էմոցիոնալ ինտելեկտը (ինքնաճանաչման մակարդակը, ինքնակառավարման մակարդակը, սոցիալական կարողությունները և հարաբերությունների կառավարման ունակությունները),

2) բարոյական դատողությունը (ազնվությունը, սկզբունքայնությունը, արդարամտությունը), և

3) արժեքային համակարգը:

Ոչ օրենսգիրքը, ոչ նշված կարգը հավելյալ չեն կարգավորում նշված չափանիշներով անձի հատկանիշների բացահայտման ձևը, ստացված տվյալների վերլուծության, գնահատման և եզրահանգման եղանակները:

Հոգեբանական թեստավորման անցկացումը

Ըստ Դատավորի թեկնածուների հավակնորդների հոգեբանական թեստավորման անցկացման կարգի[42]՝ հոգեբանական թեստավորման արդյունքում գնահատվում են դատավորի թեկնածուների հավակնորդների վերը ներկայացված հատկանիշները՝ դատավոր դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, ինքնատիրապետումը և այլն:

Վկայակոչված կարգը սահմանում է նաև հոգեբանական թեստավորման կազմակերպման և անցկացման ողջ գործընթացը: Կարգով փորձ է արվել հնարավորինս ապահովել թեստավորման հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Մասնավորապես, Դատական դեպարտամենտն ապահովում է թեստավորման ամբողջ ընթացքի ուղիղ հեռարձակումը թեստավորման սենյակից դուրս գտնվող տարածքում, որտեղ թեստավորման ընթացքին կարող է հետևել ցանկացած անձ՝ առանց տեսաձայնագրելու կամ առցանց հեռարձակելու հնարավորության:

Թեստավորման տևողությունը սահմանվում է 6 ժամ: Հավակնորդի անձի կամ թեստավորման ընթացքի հետ կապված արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներ ի հայտ գալու դեպքում Լիազոր ներկայացուցիչը, կազմելով համապատասխան արձանագրություն, այդ հանգամանքների տևողության չափով երկարաձգում է թեստավորման համար նախատեսված ժամկետը բոլոր կամ առանձին հավակնորդների համար: Արձանագրությունը ստորագրում են նաև թեստավորման սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող առնվազն երկու անձ:

[42] Դատավորի թեկնածուների հավակնորդների հոգեբանական թեստավորման չափանիշները, 2020թ օգոստոսի 31-ի թիվ ԲԴԽ-57-Ն-11 որոշման Հավելված 1, 31.08.2020թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145751

Հոգեբանական թեստի առաջին հարցին հավակնորդը պատասխանում է համակարգչային ծրագրի համապատասխան բաժնում իր անձնական տվյալները լրացնելուց և դրանք հաստատելուց հետո: Հոգեբանական թեստի յուրաքանչյուր հաջորդ հարցին հավակնորդը պատասխանում է նախորդ հարցին պատասխանելուց և իր պատասխանը հաստատելուց հետո:

Հավակնորդի կողմից Ծրագրի միջոցով «Ավարտ» կոճակը սեղմելուց հետո Ծրագիրն ամփոփում է թեստերի հարցերի պատասխանների վրա հիմնված արդյունքները (այսուհետ՝ Թեստի արդյունք) և այն ցույց է տալիս հավակնորդի համակարգչի էկրանի վրա: Թեստի արդյունքը բաղկացած է հավակնորդի կողմից Ծրագրում նախապես մուտքագրված անձնական տվյալներից և Հավակնորդի թեստային հարցերի պատասխանների վրա հիմնված ելքային տվյալներից (նկարագրեր, գրաֆիկներ և այլն):

«Ավարտ» կոճակը սեղմելուց, թեստի արդյունքը տպելուց և Ծրագիրը փակելուց (անջատելուց) հետո թեստի արդյունքը Ծրագրում կամ համակարգչում չի պահպանվում:

Հոգեբանական թեստի բոլոր հարցերին պատասխանելուց կամ թեստավորման համար հատկացված ժամանակն ավարտվելուց հետո հավակնորդը.

1) թեստի արդյունքը տպում է երկու օրինակից՝ Ծրագրի «Տպել» հրամանի միջոցով,

2) հավաստիանում է, որ թեստի արդյունքը ներառում է իր ճշգրիտ անձնական տվյալները,

3) փակում (անջատում) է Ծրագիրը և հավաստիանում է, որ թեստի արդյունքը համակարգչում չի պահպանվել,

4) թեստի արդյունքի օրինակներից մեկը պահում է իր մոտ, իսկ մյուսի վրա գրում է իր անունը և ազգանունը, ստորագրում է բոլոր էջերը և այն հանձնում է Լիազոր ներկայացուցչին:

Ըստ կարգի՝ թեստերի արդյունքները ենթակա չեն հրապարակման: Հարցազրույցից հետո դրանք պահպանվում են Դատական դեպարտամենտում՝ հարցազրույցի օրվանից սկսած մեկ ամիս ժամկետով, որից հետո դրանք ենթակա են ոչնչացման: Այդ ժամանակահատվածում դրանց ծանոթանալու իրավունք ունեն բացառապես Խորհրդի անդամները և համապատասխան հավակնորդները՝ միայն իրենց վերաբերող մասով:

Դատական օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն՝ թեստի արդյունքներն ունեն խորհրդատվական նշանակություն, տրամադրվում են հավակնորդին և Բարձրագույն դատական խորհրդին: Ուսումնասիրության նպատակներից ելնելով և հոգեբանական թեստավորման բովանդակային մասի վերաբերյալ առավել պատկերացում կազմելու համար Կազմակերպությունը դիմել էր Դատական դեպարտամենտ՝ խնդրելով տրամադրել հոգեբանական թեստի նմուշ օրինակ: Դեպարտամենտից սակայն պատասխանել են, որ օրենքով կամ որևէ իրավական ակտով նախատեսված չէ հոգեբանական թեստի նմուշ-օրինակերն որևէ անձի տրամադրելու վերաբերյալ դրույթ, հետևաբար կազմակերպության պահանջը չի կարող բավարարվել[43]:

Գտնում ենք, որ չնայած օրենքով նմուշ-օրինակ տրամադրելու պահանջ սահմանված չէ, միևնույն ժամանակ, սակայն, չկա նման որևէ արգելք և հաշվի առնելով ուսումնասիրվող հարցի

[43] Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական Դեպարտամենտ, 2022 թ օգոստոսի 5-ի ԴԴ-4 Ե-6294 գրություն:

կարևորությունն ու նաև այն հանգամանքը, որ պահանջվել է չլրացված ու նույնականացում բացառող օրինակ, Կազմակերպության պահանջը ենթակա էր բավարարման:

Հակակոռուպցիոն փորձագետների հետ հարցազրույցը

Հոգեբանական փուլին հաջորդել է հավակնորդների հարցազրույցը տեղական և միջազգային փորձագետների հետ:

Համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 44.1-րդ կետը, 94-րդ հոդվածի 1-ին մասը և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 14.04.2021 թվականին ընդունված և 29.10.2021 թվականին ուժի մեջ մտած սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 10-րդ մասի և այդ նորմերի հիման վրա Բարձրագույն դատական խորհրդի կողմից 29.11.2021 թվականին կայացված թիվ ԲԴԽ-101-Ո-292 Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների ներգրավման և գործունեության կարգը սահմանելու մասին որոշման Հավելված 1-ինի 3-րդ բաժնի 16-րդ կետի՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից ներգրավվել են տեղական և միջազգային փորձագետներ:

Համաձայն Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-10-ԱՈ-3 որոշման՝ նախնական հարցազրույց անցկացնելու նպատակով, որպես ազգային փորձագետ է ընտրվել Մարինա Պողոսյանը, իսկ որպես միջազգային փորձագետ՝ Վիտալի Վիկտորի Կասկոն[44]:

Հավելյալ տեղեկություն, այն մասին, թե արդյոք անց է կացվել մրցույթ փորձագետներ ներգրավելու համար, ինչ ընթացակարգով, ինչ չափանիշների հիման վրա են փորձագետները ներգրավվել, ովքեր են եղել այլ դիմորդները և այլն, բացակայում է, ինչը Խորհրդի կողմից կազմակերպված գործընթացի հանրային հաշվետվողականության և թափանցիկության տեսանկյունից դարձնում է խոցելի և խնդրահարույց: Ավելին, պարզ չի եղել նաև, թե ինչ չափանիշների հիման վրա և ինչ ընթացակարգով են փորձագետները թեկնածուների հետ հարցազրույց իրականացրել և եզրակացություն տվել:

Ըստ վերոնշյալ կարգի՝ դատական դեպարտամենտի ղեկավարը նախնական հարցազրույցի օրվան նախորդող օրը փորձագետներին է հանձնում յուրաքանչյուր հավակնորդի անձնական գործը, որում պետք է ներառվեն որակավորման ստուգմանը մասնակցելու հայտին կից հավակնորդի ներկայացրած փաստաթղթերը, գրավոր քննության արդյունքով ստացած միավորները, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը և օրենքով սահմանված կարգով ստացված այլ տեղեկությունները:

Այս առնչությամբ հարկ ենք համարում նշել, որ զեկույցի հրապարակման պահին՝ 2023 թվականի փետրվար ամսին գործող Դատական օրենսգրքի կարգավորումներով փորձագետների վերոնշյալ

[44] Նախնական հարցազրույց անցկացնելու նպատակով փորձագետներ ընտրելու մասին ԲԴԽ-10-ԱՈ-3 որոշում, 27.01.2022թ. https://court.am/hy/decisions-single/1162:

ինստիտուտը հանված է և այլևս չի գործում, որի պատճառներն ու հիմնավորումները նույնպես ներկայացված չեն:

Հարցազրույցի փուլ

Ինչպես արդեն ներկայացվեց, որակավորման գրավոր քննությանը հաջորդում է բանավոր հարցազրույցի փուլը, որին մասնակցում են գրավոր փուլը հաղթահարած թեկնածուները:

Հարցազրույցն անցկացնում է Բարձրագույն դատական խորհուրդը, որին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաև հոգեբան[45]: Կազմակերպությունը փորձել է պարզել նաև, թե ինչ ընթացակարգով և ինչ չափանիշների հիման վրա են հոգեբանները ներգրավվել հարցազրույցին, ինչպես է կատարվել վերջիններիս ընտրությունը: Դատական դեպարտամենտից տեղեկացրել են, որ 2022 թվականի փետրվարին դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտական բաժնի քաղաքացիական գործերի քննության և կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժինների համալրման նպատակով տեղի ունեցած հարցազրույցի փուլին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների հիման վրա մասնակցել են Բարձրագույն դատական խորհրդի 2022 թվականի հունվարի 31-ի «Դատավորների թեկնածուների հավակնորդների միասնական համալրված ցուցակում ընդգրկված անձանց հոգեբանական թեստավորման գործընթացին մասնակցելու, հոգեբանական հատկանիշների գնահատում իրականացնելու և հարցազրույցի փուլին մասնակցելու նպատակով հոգեբաններ ընտրելու մասին» թիվ ԲԴԽ 11-ԱՈ-4 որոշմամբ ընտրված հոգեբաններ Արթուր Կոբելյանը և Գագիկ Պետրոսյանը: Դատական դեպարտամենտից տեղեկացրել են նաև, որ որոշումը Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունվել է դռնփակության պայմաններում, ինչն էլ իր հերթին բացառում է հոգեբանների ներգրավման չափանիշների վերաբերյալ մանրամասները երրորդ անձանց տրամադրելը[46]:

Հատկանշական է, որ պատասխան գրությամբ վկայակոչված կարգավորումները վերաբերելիության տեսանկյունից մտահոգիչ են: Մասնավորապես, պատասխան գրությունը հղում է կատարում ԲԴԽ-57-Ն-11 որոշման 2-րդ հավելվածի 17-րդ կետին, որը սահմանում է դիտորդի իրավունքները[47]:

Վկայակոչված որոշմամբ որևէ այլ տեղեկություն հոգեբանի ընտրության չափանիշների վերաբերյալ հասանելի չէ: Միևնույն ժամանակ, պետք է արձանագրել նաև, որ սահմանված չէ հոգեբաններին ներգրավելու գործընթացի և/կամ ներգրավման չափանիշների վերաբերյալ տեղեկություն տրամադրելու որևէ արգելք:

---

[45] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 108:

[46] ՀՀ Դատական Դեպարտամենտի կողմից «Իրավունքների պատպանություն առանց սահմանների» ՀԿ կողմից 31.08.2022թ ուղարկված հարցման պատասխան գրություն, ԴԴ-4Ե-7218, 02 սեպտեմբերի 2022թ. :

[47]Դատավորի թեկնածուների հավակնորդների հոգեբանական թեստավորման չափանիշները եվ անցկացման կարգը հաստ ատելու մասին ԲԴԽ-57-Ն-11 որոշում, 2020թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145751

Հարցազրույցի փուլին Խորհրդի համար էական նշանակություն ունեն նաև վերևում արդեն նկարագրված թեստավորման արդյունքները, որոնք նախապես տրամադրվում են Խորհրդի անդամներին:

Հարցազրույցը բաղկացած է երկու փուլից[48]՝

- յուրաքանչյուր հավակնորդի անձնական գործի, ներառյալ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած խորհրդատվական եզրակացության և անցած մասնագիտական փորձի ուսումնասիրություն, որը ներկայացնելու համար Բարձրագույն դատական խորհրդի անդամներից մեկը Խորհրդում հանդես է գալիս որպես զեկուցող: Դատական օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ հավակնորդն իրավունք ունի պարզաբանումներ տալու իր անձնական գործում առկա տեղեկությունների վերաբերյալ: Դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ այլ անձնական հմտություններն ու որակները գնահատելու նպատակով Բարձրագույն դատական խորհրդի անդամները կարող են հարցեր տալ հավակնորդին թեկնածուի անձնական հատկանիշների, իսկ գիտությունների թեկնածու հավակնորդին՝ նաև նրա գիտական հետազոտությունների ոլորտի մասին.
- դատավորի վարքագծի կանոններին վերաբերող հիպոթետիկ խնդրի վերաբերյալ հավակնորդի կողմից իրականացվող վերլուծություն և դիրքորոշման ներկայացում՝ դատավորի վարքագծի հիմնարար կանոնների, դատավորին ներկայացվող պահանջների և որպես դատավոր գործելու համար կարևոր այլ անձնական հատկանիշները գնահատելու համար:

Հարցազրույցի փուլում հարցերի ընտրությունը կատարվում է նախապատրաստված հարցերը վիճակահանությամբ հավակնորդի կողմից ընտրելու միջոցով: Պատասխանելուն պատրաստվելու համար հավակնորդին տրամադրվում է 30 րոպե ժամանակ: Յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցի առավելագույն տևողությունը մեկուկես ժամ է եղել:

Հարցազրույցի փուլի դիտարկումը թույլ է տվել վեր հանել սահմանված ընթացակարգի կիրառման առանձնահատկությունները:

Մասնավորապես, յուրաքանչյուր դատավորի թեկնածուի հավակնորդի հետ տարվող հարցազրույցի սկզբում ԲԴԽ անդամներից մեկի կողմից ներկայացվել է տվյալ հավակնորդի ինքնակենսագրականը, ինչին հաջորդել է ներկայացված տեղեկությունների վերաբերյալ հարցուպատասխան և/կամ ճշտումներ՝ ըստ անհրաժեշտության:

Դրան հաջորդել է իրավիճակային խնդրի լուծումն ու դրա առնչությամբ քննարկումը:

Մրցույթին մասնակցել են երկու իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող թեկնածուներ: Վերջիններիս համար հարցազրույցը, վերը նշված երկու մասից բացի, ներառել է նաև համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի, այդ թվում՝ հիպոթետիկ իրավական նորմ, դատական ակտում արտահայտված դիրքորոշում, տեսության մեջ արտահայտված իրավական կարծիքներ և այլն) հավակնորդի կողմից իրականացվող վերլուծության ու դիրքորոշման ներկայացում՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և դատավորի

[48] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 108:

պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ այլ հմտությունները ու որակները գնահատելու համար:

Հարցազրույցների ընթացքում որոշ դեպքերում առանձին քննարկման առարկա են հանդիսացել նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունների վերաբերյալ հարցերը: Հավակնորդի համաձայնության դեպքում հարցազրույցի ընթացքում ընթերցվել է նաև փորձագետների կողմից տրամադրված խորհրդատվական կարծիքը և տրվել են հարցեր այդ կարծիքի առնչությամբ: Նմանապես, ըստ անհրաժեշտության քննարկում և հարցադրումներ են ծավալվել նաև նախապես լրացված հոգեբանական թեստի վերաբերյալ:

Հարցազրույցի փուլում հավակնորդներին Խորհրդի կողմից տրվել են տարբեր հարցեր՝ կապված վերը նշված յուրաքանչյուր փուլին առնչվող անհրաժեշտ պարզաբանումների հետ, հավակնորդների դատավոր դառնալու մոտիվացիայի, շահերի հնարավոր բախման դեպքում թեկնածուի վարքագծի ու կայացվող որոշումների հետ և այլն: Մասնավորապես, հնչեցված հարցերը եղել են հետևյալ բնույթի՝

- ինչո՞ւ է հավակնորդը ցանկանում դառնալ հակակոռուպցիոն դատարանի դատավոր,
- արդյո՞ք դատավոր դառնալու դեպքում հավակնորդը Երևանից կտեղափոխվի մարզ,
- արդյո՞ք թեկնածուն տեսնում է ոլորտային օրենսդրական խնդիրներ և արդյո՞ք ունի դրանց հետ կապված լուծումներ կամ դիրքորոշում,
- ի՞նչ քայլեր կձեռնարկի, եթե որևէ գործով իրեն միջնորդի ԲԴԽ անդամ,
- արդյո՞ք անձն ունի դատական ներկայացուցչության փորձ,
- արդյո՞ք հնարավոր է կոռուպցիան վերացնել,
- քանի՞ անգամ է հավակնորդը դիմել որակավորման քննություններին մասնակցելու համար,
- քանի՞ միավոր է հավակնորդը հավաքել,
- արդյո՞ք ստացված արդյունքները բողոքարկել է,
- եթե թեկնածուն դիմել է մեկից ավելի մասնագիտացում ունեցող դատարաններում դատավոր դառնալու համար, ապա հարց է ուղղվել նաև պատճառի ու մոտիվացվածության վերաբերյալ,
- որոշ թեկնածուների հարց է տրվել նաև աշխատավայրը հաճախ փոխելու պատճառների մասին:

Մրցույթին մասնակցած դատախազի աշխատանքային փորձով թեկնածուներին տրվել են այլ հարցեր ևս, մասնավորապես՝

- արդյո՞ք կկաշկանդվեն, եթե դատական նիստի ժամանակ մասնակցեն իրենց գործընկեր դատախազներ,
- ինչպե՞ս կվարվեն, եթե դատախազությունից անձնական խնդրանք ստանան իրենց կողմից քննվող գործի շրջանակներում,
- ինչպե՞ս են վերաբերվում այն հանգամանքին, եթե դատարանի կողմից մեղադրանքը մերժվում է:

Դատական նիստին գործընկեր դատախազ մասնակցելու առնչությամբ հիմնականում նշել են, որ չեն կաշկանդվի, քանի որ դա աշխատանքային հարաբերություններ է, ինչ վերաբերում է հնարավոր անձնական խնդրանքներին, ապա որևէ ձև ընթացք չեն տա:

Ի լրումն ընդհանուր հարցերին, առանձին հարցեր են ուղղվել նաև դատավորների օգնական աշխատող հավակնորդներին: Օրինակ՝

- ո՞ր դատավորի օգնականն է հանդիսանում,
- արդյո՞ք դատավորը որոշում կայացնելիս հաշվի է առնում օգնականի կարծիքը,
- արդյո՞ք լինում են դեպքեր, երբ դատավորի և օգնականի միջև լինում են տարակարծություններ: Եթե այո, արդյո՞ք հավակնորդը պնդում է նույն դիրքորոշումը:

Դատավորի օգնական հանդիսացող գրեթե բոլոր հավակնորդներին հարցադրում է արվել նաև այն մասին, թե ինչ կանեն, եթե, օրինակ, այդ դատավորը ինչ-որ հարցով կոնկրետ գործով իրեն դիմի: Դատավորի օգնական հանդիսացող հավակնորդներից շատերը նշել են, որ վստահ են նման բան ղեկավար դատավորի կողմից չի լինի, որոշ խումբ էլ նշել է, որ որևէ խնդրանք-դիմում իրենց կողմից չի բավարարվի:

Առանձին խումբ հարցեր են ուղղվել նաև հարցազրույցի փուլին մասնակցած հանրային պաշտպան հանդիսացող հավակնորդներին: Օրինակ՝

- ինչպե՞ս են գնահատում հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքը,
- ի՞նչ շոշափելի հաջողություններ են արձանագրել հանրային պաշտպան աշխատելու ընթացքում,
- ի՞նչ ծանրաբեռվածություն ունի հանրային պաշտպանի գրասենյակը և ի՞նչպես կարելի է այն նվազեցնել,
- ինչպե՞ս են վերաբերում փաստաբանների պալատի քաղաքական ուղղվածությանը,
- որո՞նք են հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածության պատճառները և ինչ լուծումներ կան:

Փաստաբանների պալատի քաղաքական ուղղվածության առնչությամբ դատավորի հավակնորդ հանրային պաշտպաններից կարծիք են հայտնել, որ չնայած հանրային պաշտպանների համար օրենքով քաղաքական ներգրավվածության արգելք չկա, սակայն քաղաքական բնույթի հավաքներին մասնակցելը ճիշտ չէ, քանի որ դա կարող է բացասաբար ազդել հանրային պաշտպանի հետագա մասնագիտական գործունեության վրա:

Հարցազրույցի մասնակիցներին հարցադրումներ են կատարվել նաև հոգեբանական թեստի առնչությամբ՝ պարզելու թեկնածուի անձը բնութագրող հանգամանքները, բնավորության ուժեղ և թույլ կողմերը: Այդպիսի հարցերից են եղել՝

- հավակնորդի ուժեղ և թույլ կողմերը,
- շաբաթվա ո՞ր օրն է սիրում անձը,
- ո՞րն է վերջին կարդացած գիրքը,
- ու՞մ հետ կցանկանար ճանապարհորդել,
- ինչպե՞ս և ի՞նչ պայմաններում է պատկերացնում իր ծերությունը:

Շաբաթվա նախընտրելի օրվա կապակցությամբ մի շարք դեպքերում հավակնորդները նշել են շաբաթ օրը, քանի որ հանգստի ու ընտանիքի հետ ժամանակ անցկացնելու հնարավորություն կա, նշվել է նաև ուրբաթ օրը, քանի որ դրան հաջորդում է շաբաթը:

Ճանապարհորդելու վերաբերյալ հարցի առնչությամբ նույնպես հավակնորդներից ոմանք նշել են ընտանիքի անդամների, սիրելիների հետ ճամփորդելու ցանկությունը:

Հավակնորդներից մեծ մասին հարցադրում է արվել նաև դատավոր ընտրվելու դեպքում հեռավոր մարզ, օրինակ, Սյունիք, տեղափոխվելու վերաբերյալ: Մեծամասամբ դեպքերում հավակնորդները պատասխանել են, որ նշանակման դեպքում դեմ չեն լինի, մեկ դեպքում միայն հավակնորդը Սյունիք տեղափոխության առնչությամբ հայտնել է մտավախություններ կապված անվտանգության հետ:

Մասնակից գրեթե բոլոր հավակնորդներին հարցադրում է արվել նաև դատավոր դառնալու մոտիվացիայի վերաբերյալ: Մասնակիցների կողմից նշված պատասխաններում կրկնվող է եղել այն, որ դատավորի պաշտոնը մանկուց երազելի աշխատանք է եղել: Իսկ հարցին, թե ինչու հատկապես հակակոռուպցիոն մասնագիտացման դատավոր են ձգտում դառնալ, սպառիչ և հիմնավոր պատասխաններ չեն հնչել: Որոշ դեպքերում, օրինակ, շեշտվել է կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտությունը:

Որոշ հավակնորդների որպես հոգեբանական ստուգում հարցադրում է արվել այն մասին, թե ինչ երբեք չեն անի: Հնչեցված պատասխանների մեջ նշվել է, օրինակ, որ երբեք սուտ չեն խոսի, չեն խաբի:

Հարցադրումներ ներկայացված բարեվարքության թերթիկների վերաբերյալ

Ինչպես արդեն ներկայացվել է վերևում, դատավորների ընտրության և նշանակման գործընթացում առանձնակի դերակատարում ունի նաև բարեվարքության ստուգումը, ինչը կատարվում է համապատասխան բարեվարքության թերթիկի լրացման և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից արդյունքների ամփոփման ու եզրակացության տրամադրման միջոցով:

Հանձնաժողովը թեկնածուների բարեվարքության լրացված հարցաթերթիկները ստանալուց հետո առանձնացնում է անձնական, ընտանեկան, ֆինանսական և այլ հասանելի տվյալները, որոնց հիման վրա իրականացնում են լրացուցիչ ուսումնասիրություններ: Լրացված տվյալների արժանահավատությունը ստուգելու համար հարցումներ են ներկայացվում պետական տարբեր վերաբերելի մարմինների:

Անհամապատասխանություններ ի հայտ գալու դեպքում Հանձնաժողովը կապ է հաստատում թեկնածուների հետ պարզաբանում-բացատրություն ստանալու նպատակով, ինչը նույնպես ներառվում է բարեվարքության վերջնական եզրակացության մեջ: Եթե այնուհանդերձ շարունակում են առկա լինել տեղեկություններ, կասկածներ, որոնք ամբողջովին փարատված չեն, ապա դրանց վերաբերյալ եզրակացության մեջ լրացուցիչ նշում է կատարվում, որի համաձայն՝ խորհուրդ է տրվում

Խորհրդին բանավոր հարցազրույցի փուլում թեկնածուին ուղիղ հարցադրումներ կատարել դրանց վերաբերյալ և ստանալ պարզաբանումներ[49]:

Պետական մարմիններին ուղղված պաշտոնական հարցումներից բացի Հանձնաժողովի կողմից տեղեկատվության հավաքագրում և տվյալների ճշտում կատարվում է նաև մասնավոր ոլորտի ներկայացուցիչների միջոցով, օրինակ՝ կապ հաստատելով աշխատանքի վայրի հետ:

Բարեվարքության ստուգման վերաբերյալ Խորհրդի հարցադրումները հիմնականում վերաբերել են թեկնածուի անձի և ընտանիքի անդամների տվյալներին, ֆինանսական դրությանն ու միջոցներին, անձնական այլ տվյալների, որոնք Հանձնաժողովի կողմից խնդրահարույց են դիտարկվել:

Նման հարցադրումների օրինակներից են թեկնածուի՝ զինծառայությունից ազատված լինելու հանգամանքը և ազատման հիմքն է, որը թեկնածուի կողմից այլ կերպ է նշվել, իսկ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին Պաշտպանության նախարարության կողմից տրված տվյալների համաձայն այլ հիմքի և հիվանդության:

Նմանատիպ և այլ անհամապատասխանությունների դեպքում Հանձնաժողովի կողմից պատրաստած կարծիքում նշվում են հայտնաբերված տեղեկությունները, հակասությունները, ինչպես նաև թեկնածուի կողմից տրված պարզաբանումները, ինչի համադրության և գնահատման հիման վրա էլ կազմվում է վերջնական կարծիքը:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից հարցազրույցի գնահատումը

Հարցազրույցի ժամանակ Բարձրագույն դատական խորհրդի անդամներին տրամադրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են սույն հոդվածով և Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ սահմանված գնահատման ենթակա հատկանիշները:

Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ գնահատում է յուրաքանչյուր հավակնորդի՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ:

Օրենսգիրքը, սակայն, չի հստակեցնում, թե ինչ չափանիշներով են Խորհրդի անդամները առաջնորդվում գնահատումն իրականացնելիս և ներքին համոզմունքը ինչ օբյեկտիվ այլ չափանիշներով է ձևավորվում:

Բոլոր հավակնորդների հարցազրույցների ավարտից հետո ԲԴԽ անդամներն իրականացնում են հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկում, որին հաջորդում է քվեարկությունը:

Ըստ Դատական օրենսգրքի՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները և հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

[49] Տվյալները լրացվել են նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ տեղի ունեցած պաշտոնական հանդիպումից ստացված տեղեկության հիման վրա:

Թեկնածուների վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է Բարձրագույն դատական խորհրդում հարցազրույցի արդյունքների ամփոփիչ քննարկման ավարտից հետո՝ բաց քվեարկությամբ՝ խորհրդակցական սենյակում: Քվեարկությանը Բարձրագույն դատական խորհրդի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»:

Յուրաքանչյուր մասնագիտացման բաժնի համար քվեարկության արդյունքներով Բարձրագույն դատական խորհրդի կողմից կազմվում է դատավորների թեկնածուների հավակնորդների, իսկ հակակոռուպցիոն մասնագիտացման դեպքում՝ ըստ ենթաբաժինների ցուցակ:

Ըստ էության ԿԿՀ կողմից տրված եզրակացությունը պարտադիր նշանակություն չունի ԲԴԽ համար, և վեր հանված տվյալները, նույնիսկ խնդիրները, Խորհրդի կողմից կարող են մեկնաբանվել և օգտագործվել ըստ հայեցողության, ինչը էական ազդեցություն է թողնում վերջնական որոշման վրա: Օրինակ, հարցազրույցի դիտարկման փուլից պարզ է դարձել, որ առանձին դեպքերում, Հանձնաժողովի կողմից բարձրացված են եղել խնդրահարույց հարցեր ու մտահոգություններ թեկնածուի բարեվարքության թերթիկի, մասնավորապես ֆինանսական դրության առնչությամբ, սակայն հետագայում պարզվել է, որ թեկնածուն Խորհրդի վերջնական որոշմամբ ներառվել է դատավորների թեկնածուների ցուցակում:

4. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված ուսումնասիրության և մշտադիտարկման շրջանակներում առանձնակի ուշադրություն հատկացվել է հակակոռուպցիոն դատարանի տարբեր ատյաններում դատավորի պաշտոնը զբաղեցրած մասնագետների՝ արժանիքահեն և բարեվարքության վրա հիմնված ընտրության ապահովման վրա:

Ըստ այդմ դիտարկվել է նաև օրենքով նախատեսված պահանջների և ընթացակարգերի համապատասխանելիությունը հակակոռուպցիոն դատարանի դատավորի պաշտոնում նշանակված անձանց առնչությամբ:

Հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով դատավորների թեկնածուների վերաբերյալ տեղեկություններ

2022 թվականին՝ մինչև սեպտեմբեր ամիսը, Խորհրդի կողմից առաջին ատյանի դատարանի հակակոռուպցիոն բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր քննող և կոռուպցիոն հանցագործություններ քննող դատավորների ցուցակի կազմման համար իրականացված որակավորման դիտարկված երկու ստուգումների արդյունքներով դատավորների թեկնածուների

ցուցակներում ներգրավվել են դատավորի թեկնածուի 17 հավակնորդներ[50], որոնցից 7 կին են, 10-ը՝ տղամարդ:

17 թեկնածուների հավակնորդներից զեկույցի ամփոփման պահին՝ 2022թ. նոյեմբերի 30-ի դրությամբ, արդեն իսկ նշանակված են թվով 11 դատավորներ, որոնց վերաբերյալ տվյալները հասանելի են դատական իշխանության պաշտոնական կայքում[51]: Արդեն իսկ պաշտոնի նշանակված դատավորներից 8-ը հանդիսանում են կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վարույթներով մասնագիտացված դատավորներ, 3-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներ[52]:

Հակակոռուպցիոն դատարանի համար նախատեսված են 4 նստավայրեր՝

- Երևանի նստավայր
- Ճամբարակի նստավայր
- Մարալիկի նստավայր
- Վայքի նստավայր

Նշանակված դատավորներից մեկականը հանդիսանում են Ճամբարակի և Մարալիկի նստավայրի դատավորներ[53], մյուսները՝ Երևանի նստավայրի դատավորներ: Վայքի նստավայրում, ըստ հրապարակային տեղեկության, դեռևս նշանակում կատարված չէ:

Հարկ է նշել նաև, որ Խորհրդի կողմից ցուցակում ընդգրկված մի խումբ հավակնորդների առնչությամբ Հանրապետության նախագահի կողմից ներկայացվել էր առարկություններ, ինչի հիմքով այդ անձինք հանվեցին ցուցակից: Եվ Նախագահի հրամանին, և Խորհրդի համախատասխան որոշմանը ստորև կանդրադառնանք առանձին:

Հաշվի առնելով, որ այդ անձինք Խորհրդի կողմից ընտրվել էին որպես հակակոռուպցիոն դատարանի դատավորի թեկնածուներ և ներառվել համապատասխան ցուցակներում, մեր կողմից իրականացվել է ուսումնասիրություն նաև այդ թեկնածուների վերաբերյալ, ինչը ներկայացվում է ստորև:

Մինչև հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելը զբաղեցրած պաշտոնների նկարագիր

Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված և կազմակերպության կողմից դիտարկված վերը նշված 17 թեկնածուներից 6-ը (35%) մինչ որակավորման քննություններին մասնակցելը և դրանց ընթացքում զբաղեցրել են պաշտոններ դատական համակարգում: Այս թեկնածուներից երկուսը հանդիսացել են գործող դատավորներ Երևան քաղաքի և Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարաններում համապատասխանաբար: Հարկ է նշել, որ գործող

[50] 2022 թվականի օգոստոսի 5-ին կազմվել և հաստատվել է հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինը՝ բաղկացած դատավորի մեկ թեկնածուի հավակնորդից: Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու և հաստատելու մասին ԲԴԽ-77-Ո-251 որոշում, https://court.am/hy/decisions-single/1441:

[51] Հակակոռուպցիոն դատարանի դատավորներ, https://court.am/hy/courts/141:

[52] Հակակոռուպցիոն դատարանի Երևանի նստավայր, https://court.am/hy/courts/141:

[53] Հակակոռուպցիոն դատարանի Մարալիկի նստավայր, https://court.am/hy/courts/144:

դատավորները անցնում են միայն բանավոր հարցազրույցի փուլը, որը դիտարկման ենթակա չէ, և հնարավոր չի եղել վերջիններիս հարցազրույցի փուլի վերաբերյալ հավելյալ տեղեկություն ստանալ:

Մեկ թեկնածու զբաղեցրել է ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնը: Երկու թեկնածուներ աշխատել են Վճռաբեկ դատարանում՝ որպես իրավական փորձաքննությունների ծառայության պետի ժամամանակավոր պաշտոնակատար և գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնները համապատասխանաբար: Մեկ թեկնածու որակավորման քննությունների ընթացքում որևէ զբաղվածություն չի ունեցել, սակայն վերջին պաշտոնը հանդիսացել է վճռաբեկ դատարանի դատավորի օգնականի պաշտոնը: Վճռաբեկ դատարանի աշխատակազմում աշխատող անձանցից մեկը միաժամանակ հանդիսացել է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի ոչ դատավոր անդամ:

Թեկնածուներից 4-ը (24%) որակավորման քննություններին մասնակցելու պահին աշխատել են որպես դատախազ՝ որպես, համապատասխանաբար, Լոռու մարզի դատախազի տեղակալ, ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ և ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ:

Երկու թեկնածուներ (12%) պաշտոնավարել են որպես քննիչ, համապատասխանաբար՝ ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում՝ որպես պետի տեղակալի և ՀՀ ազգային անվտանգության քննչական դեպարտամենտի տնտեսական գործունեության, բնակչության առողջության դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով քննության բաժնի ավագ քննիչի պաշտոններով:

Թեկնածուներից մեկը զբաղեցնում էր ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի խորհրդականի պաշտոնը:

Թեկնածուներից երկուսը (12%) զբաղեցրել են պաշտոններ գործադիր իշխանության համակարգում՝ համապատասխանաբար աշխատելով Պետական եկամուտների կոմիտեում՝ որպես ավագ մաքսային տեսուչ-իրավաբան, և Կադաստրի պետական կոմիտեում՝ որպես կոմիտեի ղեկավարի տեղակալ:

Մեկ թեկնածու (6%) որակավորման քննությունների ժամանակ աշխատել է Ազգային ժողովում (ԱԺ)՝ որպես ԱԺ աշխատակազմի իրավական և ապահովան և սպասարկման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար:

Մեկ թեկնածու (6%) հանդիսացել է փաստաբան:

Թեկնածուների վերջին զբաղվածությունը մինչեւ մրցույթին մասնակցելը



Թեկնածուների անձնական ու ընտանեկան կապերը և մասնագիտական գործունեությանը վերաբերող տվյալներ

Կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրությունը, հարցազրույցի փուլի դիտարկումը և համացանցում բաց տվյալների և տեղեկությունների վերլուծությունը թույլ են տվել տեղեկություններ դուրս բերել և պատկեր կազմել նաև դատավորների թեկնածուների հավակնորդների ընտանեկան և այլ կապերի մասին: Ըստ այդմ, վեր են հանվել նաև խնդրահարույց հարցեր՝ կապված որոշ դատավորների թեկնածուների հավակնորդների հետ:

Ուսումնասիրությամբ վերհանված տեղեկությունների համաձայն՝ հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գործող դատավորներից մեկը, հանդիսանալով ՀՀ տարածքում գործող բանկերից մեկի փոխառու, վարույթ է ընդունել, քննել և հօգուտ նույն այդ բանկի բավարարել թվով 31 գործեր[54]: Նման փաստերը օբյեկտիվորեն չեն կարող առանց գործերի բովանդակային ուսումնասիրության որակվել ի վնաս դատավորի, սակայն, ունակ են վնասելու դատավորի նկատմամբ հանրային վստահությանը՝ կապված նրա օբյեկտիվության և անաչառության հետ: Ըստ ՁԼՄ-ների՝ նույն անձի վերաբերյալ հանրային տեղեկությունների ուսումնասիրությունը վեր է հանել դատավորի գործունեության և վստահելիության վերաբերյալ փաստաբանների կողմից մատնանշած խնդիրներ[55]:

[54] Հետք, Երբ վարկառու դատավորը քննում է իրեն վարկ տված բանկի գործը, 13.09.2021թ. https://hetq.am/hy/article/135607:
[55] News.am, Որոշ դատավորների գործունեությունն ուղղակի խայտառակություն է, 16.08.2017թ. https://news.am/arm/news/405054.html; http://asekose.am/am/post/oros-datavorneri-gorcouneoutyounn-ouxxaki-xaytarakoutyoun-e-pastabane-datavor-naira-avetisyani-masin; Ժողովուրդ, Դատավորն <<արջի ծառայություն է>> մատուցել, 23.12.2013թ. https://armlur.am/16144/;

Անհրաժեշտ է փաստել, որ թեկնածուի անունը Բարձրագույն դատական խորհրդի կողմից հանվել է առաջխաղացման և հակակոռուպցիոն մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակից[56]:

Թեկնածուների ցուցակում ներառված մեկ այլ թեկնածուի հավակնորդի անունը լրատվամիջոցներում կապվում է իր նախկին կնոջ տան ուղղությամբ կրակոցի հետ, ինչը վերջինս հերքել է[57]: Իսկ մամուլում տարածված մեկ այլ նյութով իր անձի մասնակցությամբ ծեծկռտուքի առնչությամբ նշել է, որ դա ընտանեկան խնդիր է և հրապարակման ենթակա չէ[58]: Որակավորման քննությունների բանավոր փուլի դիտարկումից պարզ է դարձել նաև, որ հավակնորդի եղբայրը և հայրը 2008 թվականի մարտի 1-ի գործով հանդիսացել են մեղադրյալ, ունեն քաղաքական հայացքներ: Թեկնածուն, սակայն, նշել է, որ քաղաքական հայացքներ չունի, ունի դիրքորոշում, որը դատավոր դառնալու պարագայում որևէ նշանակություն ունենալ չի կարող:

Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ներառված անձանց մեջ եղել են անձինք, ում ծնողները այդ պահին հանդիսացել են գործող դատավորներ: Մեկի պարագայում մայրը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր, մյուսի պարագայում՝ հայրը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր: Վերջին դեպքում թեկնածուն հարցազրույցի ժամանակ ընտանեկան կապերը քննարկելիս նշել է այն հանգամանքը, որ կարճ ժամանակ հետո հոր լիազորությունները դադարելու են՝ տարիքի հիմքով:

Հատկանշական է, որ դատավոր ընտանիքի անդամ ունեցող թեկնածուներն ընտանեկան կապերից օգտվելու, խորհուրդ հարցնելու պարագայում ցուցաբերել են հստակ մոտեցում այն մասով, որ բացառել են ընտանիքի անդամների հետ գործերի քննարկումն ու խորհրդակցությունները, սակայն ընդունել են, որ որպես մասնագետներ հնարավոր է տարբեր իրավական հարցեր և մոտեցումներ քննարկեն:

Թեկնածուների բարեվարքություն և ֆինանսական դրություն. Միջազգային փորձագետի կարծիքներ

Ուսումնասիրության շրջանակներում առանձնակի կարևորություն է ստացել թեկնածուների բարեվարքության ստուգումն ու արդյունքների օգտագործումը որոշում կայացնելիս:

Որակավորման քննությունների բանավոր փուլի դիտարկման արդյունքների համադրումը հասանելի հրապարակային տեղեկությունների հետ թույլ է տվել արձանագրել, որ ցուցակի 16 թեկնածուներից առնվազն 6-ի առնչությամբ առկա են մտահոգություններ բարեվարքության ստուգման և մասնավորապես հայտարարագրված ֆինանսական միջոցների, դրանց ծագման աղբյուրի ու հիմնավորումների առնչությամբ:

---

[56] Մերի Համբարձումյանին, Միքայել Մելքումյանին, Մնացական Հարությունյանին, Լևոն Գրիգորյանին, Տաթևիկ Ստեփանյանին, Պավել Թադևոսյանին՝ վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակից, իսկ Կարեն Գրիգորյանին, Ռիմա Առաքելյանին, Նաիրա Ավետիսյանին և Սյուզաննա Վարդանյանին՝ դատավորների թեկնածուների ցուցակից հանելու մասին ԲԴԽ-76-Ո-249 որոշում, https://court.am/hy/decisions-single/1439

[57] Առավոտ, Փաստաբանի դեմ հաղորդում կա, 27.12.2021թ. https://www.aravot.am/2021/12/27/1238468/:

[58] Ժողովուրդ, Ծեծկռտուք Եղվարդում. ովքե՞ր են ծեծի ենթարկել փաստաբանին և նրա եղբորը, 11.08.2020թ. https://armlur.am/1031338/:

Մտահոգությունները կապված են կամ անձամբ թեկնածուի հավակնորդի կամ վերջինիս ընտանիքի անդամի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացված հայտարարագրով ներկայացված ֆինանսական միջոցների և/կամ գույքի հետ: Օրինակ, հավակնորդի որդու կողմից հայտարարագրվել է 4 անշարժ գույք, որոնց առնչությամբ, սակայն, չի նշվել ձեռք բերման և/կամ օտարման մասին տվյալները:

Նմանապես, մեկ այլ հավակնորդ հայտարարագրում նշել է կանխիկ միջոցների մասին, որոնք, սակայն, փաստացի չի ունեցել, ինչը արձանագրվել է նաև միջազգային փորձագետի հետ ունեցած առանձնազրույցից հետո տրված կարծիքով: Հավակնորդը խոստովանել է, որ ինքը ընդհանրապես այդ գումարները չի ունեցել և ոչ արժանահավատ տվյալներ է հրապարակել: Նշված հանգամանքը բացատրել է նրանով, որ տվյալ ժամանակահատվածում (2017 թվական) հայտարարագրերը նոր են սկսել լրացնել և դրանք եղել են մտացածին թվեր, որոնք չեն համապատասխանել իրականությանը: Այդ ժամանակ նման պրակտիկան եղել է համընդհանուր մոտեցում: Հավակնորդը պատասխանել է, որ չի եղել դեպք հայտարագրում միտումնավոր սխալ տեղեկություններ լրացնելու վերաբերյալ: Խորհրդի անդամի կողմից կարծիք է հնչել, որ միգուցե քննիչներով կեղծ թվեր են ներկայացրել, որ հետագայում «ժառանգություն» ստանալու դեպքում խնդիրներ չառաջանան, թե որտեղից է այդ գումարը: Հավակնորդը համաձայնվել է հնչեցված կարծիքի հետ: Նշենք, որ թեկնածուն նշանակվել է դատավորի պաշտոնում:

Մեկ այլ դատավորի թեկնածու, ով ևս նախկինում հանդիսացել է քննիչ, տվյալներ է ներկայացրել 10.000 դոլարի չափով նվիրատվության վերաբերյալ, միևնույն ժամանակ, սակայն, արձանագրվել են հայտարարագրի առնչությամբ անճշտություններ ու ոչ հստակ տվյալներ: Հավակնորդը բանավոր փուլին պարզաբանել է, որ նվիրատվությունը կատարվել է ընտանիքի անդամի կողմից հարսանիքի կապակցությամբ, իսկ հայտարարագրում թույլ տրված անճշտությունները կապված են ամուսնության հետ, քանի որ շտապել է և սխալներ թույլ տվել: Այս թեկնածուի անունը ԲԴԽ կողմից հետագայում հանվել է դատավորների թեկնածուների ցուցակից Հանրապետության նախագահի կողմից ներկայացված առարկությունների հիմքով:

Նմանապես, գործող դատավորներից մեկի առնչությամբ ևս արձանագրված է եղել խնդիր, կապված կնոջ հայտարարագրում նշված աշխատավարձի և բաժնային սեփականության առնչությամբ սխալ նշված տեղեկատվության վերաբերյալ: Հավակնորդը պարզաբանել է, որ կնոջ աշխատավարձի թվի հետ կապված սխալմունքը տեղի է ունեցել աշխատավարձը «մաքուր» և «կեղտոտ» ներկայացնելու պատճառով, որի վերաբերյալ պարզաբանում է ներկայացվել նաև ԿԿՀ-ին:

Մեկ այլ՝ արդեն իսկ դատավորի պաշտոնի նշանակված թեկնածուի վերաբերյալ արձանագրվել է այլ բնույթի խնդիր: Մասնավորապես, ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ թեկնածուն դատախազության միջոցներից որպես նվիրատվություն ստացել է բնակարան: Հրապարակային տեղեկությունների ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ 2014թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ կառավարությունը, փոփոխելով նախկինում ընդունած իր որոշումը, ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության, գլխավոր դատախազության, պետական պահպանության ծառայության, հատուկ քննչական ծառայության ծառայողների և ֆինանսների նախարարության աշխատողների բնակարանային պայմանների բարելավման նպատակով բնակարանների

ձեռքբերման համար հատկացրել է 754 մլն 806 հազար դրամ, որից 52 մլն 402 հազար դրամը՝ դատախազությանը[59]: Անհասկանալի է, սակայն, նման գնման ու բնակարանը դատախազին տրամադրելու հիմքը, պարզ չէ, թե ինչի համար և ինչ չափանիշներով է կոնկրետ դատախազին այն հատկացվել:

Անդրադառնալով միջազգային փորձագետի կողմից տրված կարծիքներին՝ որպես օրինակ կարելի է ներկայացնել հավակնորդներից ոմանց առնչությամբ տրված խորհրդատվական կարծիքները:

Թեկնածուներից մեկի վերաբերյալ կարծիքը եղել է դրական, բայց որոշակի վերապահումներով: Փորձագետի կողմից խորհուրդ է տրվել թեկնածուին դրական որոշում կայացնելու դեպքում լրացուցիչ վերապատրաստում անցնել՝ շեշտը դնելով առաջնորդի որակների և վարքագծի հմտությունների զարգացման վրա, որոնք կապված են հոգեբանական ծանրաբեռնվածության իրավիճակների և համապատասխան վարքագծի հետ:

Մեկ այլ թեկնածուի առնչությամբ կրկին միջազգային փորձագետի կողմից տրվել է դրական կարծիք, սակայն խորհուրդ է տվել խորացնել հմտությունները դատարանների անկախության ընկալման առնչությամբ դասընթացների մասնակցության միջոցով:

Միջազգային փորձագետի կողմից խնդրահարույց է դիտարկվել հավակնորդներից մեկի կողմից ոչ արժանահավատ՝ չունեցած կանխիկ միջոցների վերաբերյալ հայտարարագրում նշելու փաստը:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող և Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորների թեկնածուների վերաբերյալ տեղեկություններ

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են նաև վերաքննիչ դատարանում համապատասխան գործեր քննելու համար դատավորների ներգրավման գործընթացը կարգավորող օրենսդրությունը ու թեկնածուների՝ օրենքով նախատեսված պահանջների համապատասխանելիության ստուգման խնդիրները:

Սույն զեկույցի առաջին մասում արդեն իսկ ներկայացվել էր դատավորների ներգրավվման օրենսդրական կարգավորումները: Ըստ նախատեսված կարգավորումների՝ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանում նախատեսվել է 12 դատավորի կազմ, որից 6-ը կքննեն կոռուպցիոն հանցագործություններ, 6-ը՝ կոռուպցիոն քաղաքացիական գործեր: Վերաքննիչ քրեական և վերաքննիչ քաղաքացիական դատարանների առանձնացված գործեր քննող դատավորների համար նախատեսված է նաև առանձին նստավայրի կառուցում, որն ընթացքի մեջ է[60]:

---

[59] «Գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանի 2014թ. հոկտեմբերի 3-ի հրամանով 78.08քմ մակերեսով բնակարան ձեռք է բերվել նաև գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազի համար՝ 20.808.320 դրամով», Հետք, Պետբյուջեի հաշվին 31.6 մլն դրամ արժողության բնակարան գլխավոր դատախազի տեղակալ Էմիլ Բաբայանի համար, 16.02.2016թ. https://hetq.am/hy/article/58546:

[60] ՀՀ-ում արդեն գործում է կոռուպցիոն գործերի քննության եռաստիճան հակակոռուպցիոն դատարան, https://www.1lurer.am/hy/2022/09/25/%D5%80%D5%80-%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A1%D6%80%D5%A4%D5%A5%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7-%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A5%D6%80%D5%AB-

Կազմակերպության կողմից ուսումնասիրության առարկա է դարձել վերաքննիչ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ներառված անձանց ցուցակը, վերջիններիս զբաղեցրած պաշտոնները, գույքային և ֆինանսական դրությունը, կապերը և դատավորի պաշտոնի ու մասնավորապես հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի դատավորի համար պահանջվող չափանիշների համապատասխանելիությունը:

Ըստ այդմ, ուսումնասիրվել են ցուցակում ներառված վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով դատական ակտերի վերանայումն իրականացնելու համար ընտրված դատավորների 6 թեկնածուների և Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնելու համար ընտրված դատավորների 4 թեկնածուների տվյալները:

Քաղաքացիական գործերով դատական ակտերի վերանայումն իրականացնելու համար ընտրված 6 թեկնածուներից 5-ը հանդիսացել են գործող դատավորներ՝ 3-ը՝ առաջին ատյանի դատարաններից, 2-ը՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանից: Ցուցակում ընդգրկված թեկնածուներից մեկը հանդիսացել է իրավաբանական գիտությունների թեկնածու:

Գործող դատավորների առնչությամբ լրատվամիջոցներում տեղ գտած տեղեկության ուսումնասիրությունը վեր է հանել մտահոգություն՝ կապված ընտանիքի անդամի ֆինանսական միջոցների հետ՝ մասնավորապես եկամուտների և կատարված ծախսերի անհամապատասխանության առնչությամբ[61]: Մեկ այլ թեկնածուի անունը մամուլում տեղ է գտել չհիմնավորված նվիրատվություններ ստացած դատավորների շարքում[62]: Թեկնածուների կազմում եղել են դատավորներ, ովքեր մինչ հակակոռուպցիոն դատարանի դատավորի պաշտոնում ներկայացվելը արդեն իսկ քննել են հակակոռուպցիոն գործեր[63]:

Ցուցակում ներառված իրավաբանական գիտությունների թեկնածուն հանդիսացել է գործող դատավորի որդի: Թեկնածուի անունը, ըստ մամուլում շրջանառվող տեղեկությունների, կապվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2019 թվականին գնված տարեցների համար նախատեսված փոքր տների գնման գործընթացի հետ: Թեկնածուն հանդիսացել

%D6%84%D5%B6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A5%D5%BC%D5%A1%D5%BD%D5%BF%D5%AB%D5%B3%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AF%D5%B8%D5%BC%D5%B8%D6%82%D5%BA%D6%81%D5%AB%D5%B8%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6/802325

[61]Իրավաբան, Դատավոր Տաթևիկ Ստեփանյանի և նրա ամուսնու գույքն ու եկամուտները, 8.08.2018թ. https://iravaban.net/198501.html

[62] Civilnet, Նվիրատվություն դատավորներին. ով ինչքան է ստացել, https://www.civilnet.am/news/191659/%D5%B6%D5%BE%D5%AB%D6%80%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%9D-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%B8%D5%BE-%D5%B8%D6%80%D6%84%D5%A1%D5%B6-%D5%A7-%D5%BD%D5%BF%D5%A1%D6%81%D5%A5%D5%AC/

[63] Civic.am, Դատավոր Դիանա Հովհաննիսյանը կքննի Սեյրան Օհանյանց և նրա հետ փոխկապակցված անձանցից ապօրինի գույքի բռնագանձման դատախազության պահանջը, 30.05.2022թ. https://civic.am/law/32403-kqnnvi-sedyran-ohanyanic-ev-nra-het-poxkapakcvac-andznaqcic-aporini-guyqi-brnagandzman-dataxazutyan-pahanjy.html?fbclid=IwAR3zgGkWkJA71V2YUKYKCRPXqshUH-E7EMofg13ycPqgZjLjt01IhLiU0zI

է մրցույթին մասնակցած ընկերության տնօրեն, որը պետք է անշարժ գույք մատակարարեր[64]: Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել[65]:

Հարկ է նշել, որ Բարձրագույն դատական խորհրդի վերը հիշատակված որոշմամբ քաղաքացիական մասնագիտացման գործող երկու դատավորների և իրավաբան գիտնականի անունները հանվել են Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների քաղաքացիական մասնագիտացման բաժնի ցուցակից[66]:

Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնելու դատավորների թեկնածուների ցուցակում ներառված են եղել 4 թեկնածուներ: Վերջիններից 3-ը հանդիսացել են գործող դատավորներ, ընդ որում՝ երկուսը՝ վերաքննիչ դատարանի, մեկը՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, ով աշխատել է որպես դատախազ:

Վերաքննիչ դատարանի գործող դատավորներից մեկի անունը եղել է տարբեր տարիների տարբեր աղբյուրներից նվիրատվություններ ստացած դատավորների ցուցակում[67]:

Մյուս թեկնածուն հանդիսացել է հանրային հնչեղություն ունեցող գործերով ներգրավված մեղադրյալների խափանման միջոց՝ կալանավորման հարցի վերաբերալ որոշում կայացրած դատավոր[68]: Հատկանշական է, որ սույն դատավորի անունը ԲԴԽ վերը նշված որոշմամբ նույնպես հանվել է Վերաքննիչ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնից:

Ցուցակում ներգրավված իրավաբանական գիտությունների թեկնածուն վերջին երեք տարիների ընթացքում աշխատել է դատախազության համակարգում, վերջին պաշտոնը եղել է ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալի պաշտոնը:

---

[64] Հետք, Սոցապը 6 ամիս առաջ «հրատապ» կարգով տարեցների համար տներ է գնել, սակայն դրանք մինչ օրս բնակեցված չեն, 29.06.2020թ. https://hetq.am/hy/article/118819

[65] Epress.am, Նախարարությունը արտոնել է «ծերերի խնամքի» համար փլատակների գնումը, 02.09.2020թ. https://epress.am/2020/09/02/1638-3.html

[66] Մերի Համբարձումյանին, Միքայել Մելքումյանին, Մնացական Հարությունյանին, Լևոն Գրիգորյանին, Տաթևիկ Ստեփանյանին, Պավել Թադևոսյանին՝ վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակից, իսկ Կարեն Գրիգորյանին, Ռիմա Առաքելյանին, Նաիրա Ավետիսյանին և Սյուզաննա Վարդանյանին՝ դատավորների թեկնածուների ցուցակից հանելու մասին ԲԴԽ-76-Ո-249 որոշում, https://court.am/hy/decisions-single/1439:

[67]Civilnet, Նվիրատվություն դատավորներին. ով ինչքան է ստացել, https://www.civilnet.am/news/191659/%D5%B6%D5%BE%D5%AB%D6%80%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%9D-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%B8%D5%BE-%D5%B8%D6%80%D6%84%D5%A1%D5%B6-%D5%A7-%D5%BD%D5%BF%D5%A1%D6%81%D5%A5%D5%AC/

[68] 168.am, «Դատավոր Մնացական Հարությունյանը մի օր կմնա առանձին իր խղճի հետ». Էրիկ Ալեքսանյան, 13.08.2021թ., https://168.am/2021/08/03/1557760.html; Փաստինֆո, Դատավոր Մնացական Հարությունյանը քննում է Դավիթ Տոնոյանի և մյուսների խափանման միջոցի հարցը. Ինքնաբացարկը մերժվեց, 03.09.2022թ. https://www.pastinfo.am/hy/news/2022/03/09/ybf6azcb2/1361147

Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորների վերաբերյալ տեղեկություններ

Ինչպես արդեն ներկայացվել է, հղում կատարելով ՀՀ Սահմանադրության կարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից Ազգային ժողով ներկայացրած թեկնածությունների քննարկման և Ազգային ժողովում վերջիններիս ներկայացման արդյունքում ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը համալրվել է 6 դատավորներով, որոնցից երեքը հանդիսանում են հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության կազմ[69], երեքը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության կազմ[70]: Թեկնածուները ընտրվել են պատգամավորների 67 կամ 68 կողմ ձայներով[71], մյուս թեկնածուները ստացել են 0 ձայն: Ինչպես արդեն նշվեց, համաձայն ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 143-րդ հոդվածի՝ Վճռաբեկ դատարանի դատավորները ընտրվում են գաղտնի քվեարկությամբ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Ինչը ՀՀ Ազգային ժողովի 8-րդ գումարման 107 պատգամավորների պարագայում կազմում է 65 ձայն: Հատկանշական է այն, որ Ազգային Ժողովում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն ունի 71 պատգամավոր[72], ինչը հնարավորություն է տալիս բացառապես սեփական պատգամավորների ձայներով ընտրել առաջադրված այս կամ այն թեկնածուին՝ առանց ընդդիմության մասնակցության, ինչն էլ տեղի է ունեցել վերոնշյալ ընտրությունների պարագայում:

Անդրադառնալով թեկնածուներին՝ հարկ է նշել, որ հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության կազմի դատավորներից մեկը մինչ վճռաբեկ դատարանի դատավորի պաշտոնում ընտրվելը հանդիսացել է Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ-զինվորական քննչական գլխավոր վարչության պետ: Ըստ մամուլում հրապարակված տեղեկությունների թեկնածուն 2020թ. 260.000 ԱՄՆ դոլարով օտարել է անշարժ գույք[73]: Ընդ որում թեկնածուի հայտարարագրերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ նույն գույքը ձեռք է բերվել 2018 թվականին 37 միլիոն ՀՀ դրամով[74]: Մինչդեռ անշարժ գույքի ձեռքբերման միջոցների աղբյուրն

---

[69] ՀՀ վճռաբեկ դատարանի Հակակոռուպցիան պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության կազմ, https://court.am/hy/courts/139

[70] ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության կազմ, https://court.am/hy/courts/140

[71] Լիպարիտ Մելիքջանյանը, Արթուր Դավթյանը և Գևորգ Գյոզալյանը ընտրվեցին Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորներ, 28.06.2022թ. https://infocom.am/hy/Article/84429; Առավոտ, Սերգեյ Չիչոյանը և Կարեն Բիշարյանն ընտրվել են Վճռաբեկ դատարանկ հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորների թեկնածուներ, 30.06.2022թ., https://www.aravot.am/2022/06/30/1277401/

[72]ՀՀ Ազգային ժողովի 8-րդ գումարման պատգամավորներ, http://www.parliament.am/deputies.php?sel=factions&lang=arm

[73] Լուրեր, 1 անշարժ գույք, 77 հազար դոլար, ՔԿ նախագահի տեղակալ Արտակ Կրկյաշարյանի հայտարարագիրը, https://www.youtube.com/watch?v=LjNsqMJPP1c

[74] Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույթի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիր, http://cpcarmenia.am/hy/declarations-registry/id=34257/

անհայտ է, քանի որ ոչ 2017 թվականի, ոչ 2018 թվականի հայտարարագրերում 37 միլիոն ՀՀ դրամ դրամական միջոցների առկայության կամ եկամտի մասին, այդ թվում՝ ստացված փոխառության տեսքով, հայտարարագրված չէ[75]: Միաժամանակ, 2020թ. թեկնածուն կնոջը նվիրատվության կարգով փոխանցել է 180.000 ԱՄՆ դոլար գումար, նույն տարվա ընթացքում թեկնածուի կինը 50.000 ԱՄՆ դոլարով գնել է անշարժ գույք և հայտարարագրել 80.000 ԱՄՆ դոլար կանխիկ գումար՝ որպես տարեվերջին առկա գումար: Մնացած գումարի վերաբերյալ տեղեկություն հայտարարագրում առկա չէ[76]:

Մյուս երկու թեկնածուները մինչ վճռաբեկ դատարանի դատավոր ընտրվելը հանդիսացել են համապատասխանաբար առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի դատավորներ:

Թեկնածուներից մեկը զուգահեռաբար հանդես է եկել նաև որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ: Ըստ հանրայնորեն հասանելի տվյալների՝ թեկնածուի եղբայրը գործող դատախազ է[77], եղբոր որդին բավականին վերջերս նշանակվել է դատավորի պաշտոնում[78]: Ուշագրավ է նաև թեկնածուի ընտանիքի այլ անդամների վերաբերյալ հրապարակային հասանելի տվյալները: Ինչպես պարզ է դարձել տվյալների ուսումնասիրությունից՝ թեկնածուի փեսան, հարսը, դուստրը նույնպես աշխատում են դատական համակարգում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ[79]: Թեկնածուի անունը կապվում է նաև համակարգում բավականաչափ աղմուկ բարձրացրած՝ Բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահի լիազորությունների կասեցման գործընթացի քվեարկության հարցի հետ[80]: Թեկնածուն 2015 թվականին 19 միլիոն դրամի նվիրատվություն է ստացել, սակայն հավելյալ տեղեկություններ գումարի մասին գոյություն չունեն[81]:

Երրորդ թեկնածուն մինչ 2021թ. նոյեմբերին վերաքննիչ քրեական դատարանի դատավորի պաշտոնում նշանակվելը հանդիսացել է Ռոբերտ Քոչարյանի և մյուսների գործով մեղադրող դատախազը[82]:

Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության կազմի երեք դատավորներից մեկը մինչ վճռաբեկ դատարանի պաշտոնում ընտրվելու վերջին օրը հանդիսացել է Ազգային ժողովի պատգամավոր, եղել է «Քաղաքացիական

---

[75] Հայտարարատու պաշտոնատար անձի 2017 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիր, http://cpcarmenia.am/hy/declarations-registry/id=22676/

[76] Լուրեր, 1 անշարժ գույք, 77 հազար դոլար, ՔԿ նախագահի տեղակալ Արտակ Կրկյաշարյանի հայտարարագիրը, https://www.youtube.com/watch?v=LjNsqMJPP1c

[77] Ժողովուրդ, Դատախազի դատավոր եղբոր պարզաբանումները, 23.10.2015թ. https://armlur.am/436025/

[78] Բարձրագույն դատական խորհրդում տեղի է ունեցել դատավորի երդման արարողություն, https://www.youtube.com/watch?v=ovIiPK7EkCs

[79] Ժողովուրդ, Փեսան, հարսը, դուստրը, եղբոր տղան. ԲԴԽ անդամի ազգուտակը տեղավորվել է դատական համակարգում, 23.08.2021թ. https://www.youtube.com/watch?v=NVHcfT-AXsw

[80] Ժողովուրդ, Ով է Վճռաբեկ դատարանի նորընտիր դատավոր Սերգեյ Չիչոյանը. ինչ կապ ունի նա Վարդազարյանի լիազորությունների կասեցման հետ, 30.01.2022թ.https://armlur.am/1196540/

[81]Civilnet, Նվիրատվություն դատավորներին. ով որքան է ստացել, https://www.civilnet.am/news/191659/%D5%B6%D5%BE%D5%AB%D6%80%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%9D-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%B8%D5%BE-%D5%B8%D6%80%D6%84%D5%A1%D5%B6-%D5%A7-%D5%BD%D5%BF%D5%A1%D6%81%D5%A5%D5%AC/

[82] 1in.am, Քոչարյանը ունեցել է անձնական դրդում՝ իշխանությունը Սերժ Սարգսյանին փոխանցել. Կարեն Բիշարյան, 16.05.2019թ. https://www.1in.am/2561111.html; Ազատություն, Դատարանը մերժեց դատախազ Բիշարյանին բացարկ հայտնելու՝ Քոչարյանի և մյուսների միջնորդությունը, 26.11.2019թ. https://www.azatutyun.am/a/30293554.html

պայմանագիր» կուսակցության անդամ: Կուսակցությանն անդամակցությունը թեկնածուն դադարեցրել է դատավոր դառնալուց 20 օր առաջ[83]:

Երկրորդ թեկնածուն հանդիսացել է Բարձրագույն դատական խորհրդի անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու: Թեկնածուն 2017 թվականին «Ելք» դաշինքի նախընտրական ցանկով մասնակցել է ԱԺ խորհրդարանական ընտրություններին: Վերջինս այս հարցի առնչությամբ նշել է, որ քաղաքական գործունեությամբ զբաղվել է ընդամենը մեկ ամիս, որևէ կուսակցության անդամ չի հանդիսացել: Իսկ Բարձրագույն դատական խորհրդի անդամ 2018 թվականին առաջադրել են Հայաստանի հանրապետական կուսակցության և Հայ հեղափոխական դաշնակցության խմբակցությունները[84]:

Հակակոռուպցիոն պալատի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության կազմի դատավոր ընտրված վերջին թեկնածուն մինչ պաշտոնի նշանակվելը աշխատել է որպես փաստաբան: 2021թ. իր թեկնածությունն է առաջադրել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի պաշտոնին[85]: Հանրային հնչեղություն ունեցող գործերով որպես փաստաբան ներկայացրել է նախկին ՀՀ առողջապահության նախարար, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ, ներկայումս Ազգային ժողովի պատգամավոր Արսեն Թորոսյանի շահերը Արա Մինասյանն ընդդեմ Արսեն Թորոսյանի գործով:[86]

Երեք ատյանների թեկնածուների վերաբերյալ ներկայացված տվյալներն ու փաստերը բավարար հիմքեր են տրամադրում ողջամիտ կասկածից վեր պատկերացում ձևավորելու հակակոռուպցիոն դատարանի բոլոր ատյանների դատավորների վերաբերյալ: Ինչպես կարելի է նկատել, բավականաչափ շատ են մտահոգությունները թեկնածուների ֆինանսական դրության հետ կապված, որոնք բավարար չափով հիմնավորում չեն ստացել: Մյուս կողմից, թեկնածուների կապերը որոշ դեպքերում ևս առաջացնում են մտահոգություններ: Նման պատկերը արդեն իսկ ունակ է ստվեր գցել դատարանի անաչառ և արդյունավետ գործունեության վրա՝ բարձրացնելով օբյեկտիվ հարցեր նշանակված դատավորների մեծամասնության օբյեկտիվ և արժանիքահեն ընտրության վերաբերյալ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները

Բարեվարքության ստուգման արդյունքների պրակտիկ կիրառման առանձնահատկությունները հասկանալու համար կազմակերպությունը ուսումնասիրել է նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրվող եզրակացությունների թվային պատկերը: Այդ նպատակով հարցումներ են ներկայացվել Հանձնաժողովին՝ խնդրելով առանց անձնական տվյալների ներկայացման տրամադրել տեղեկություն, թե ցուցակներում ներառված թեկնածուներից քանիսի

[83] Փաստերի ստուգման հարթակ, Երբեմնի ԲՊ-ական, դատավոր Արթուր Դավթյանի ընտրության քաղաքական լինելու կասկածները չեն փարատվել, 12.07.2022թ. https://fip.am/19844

[84] Panorama.am, Իմ քաղաքական կենսագրությունը տևել է ընդամենը մեկ ամիս. Լիպարիտ Մելիքջանյան, 27.02.2018թ. https://www.panorama.am/am/news/2018/02/27/%D4%BC%D5%AB%D5%BA%D5%A1%D6%80%D5%AB%D5%BF-%D5%84%D5%A5%D5%AC%D5%AB%D6%84%D5%BB%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6/1911924

[85] Իրավաբան.նեթ, Գևորգ Գյոզալյանն առաջադրվել է Փաստաբանների պալատի նախագահի պաշտոնում, 20.08.2021թ. https://iravaban.net/346328.html:

[86] ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի փաստաբան Գևորգ Գյոզալյանի մամուլի ասուլիսը, https://lex.am/events.php?n=536

վերաբերյալ է Հանձնաժողովի խորհրդատվական կարծիքը եղել «դրական», «դրական վերապահումով» և քանիսինը «բացասական» ըստ մասնագիտացումների և ատյանների:

Հանձնաժողովի կողմից ստացված պատասխաններով վեր է հանվել հետևյալ պատկերը.

Մասնավորապես, հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակներում ընդգրկված 16 դատավորների թեկնածուներից 7-ի վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական, 8-ի վերաբերյալ՝ դրական վերապահումով և 1 թեկնածուի վերաբերյալ՝ բացասական եզրակացություններ: Հավելյալ ներկայացվել է, որ թվով 8 դրական վերապահումով եզրակացություններից 4-ի համար հիմք են հանդիսացել թեկնածուների գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները, 3-ի համար՝ գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները և կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքները, իսկ 1-ի համար թեկնածուի՝ կարգապահական, վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքները: Ինչ վերաբերում է 1 բացասական եզրակացությանը, ապա վերջինիս հիմք հանդիսացել է թեկնածուի կարգապահական, վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքները, ինչպես նաև թեկնածուի կողմից բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատությունը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր և կոռուպցիոն հանցագործություններ քննող դատավորների թեկնածուների վերաբերյալ



Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի հակակոռուպցիոն մասնագիտացման դատավորների թեկնածուներին, ապա վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով և վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով թվով 10 թեկնածուներից 6-ի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը տրամադրել է դրական, թվով 2-ի վերաբերյալ՝ դրական վերապահումով և մյուս 2-ի վերաբերյալ ՝ բացասական եզրակացություններ:

Վերաքննիչ դատարանի հակակոռուպցիոն մասնագիտացման դատավորների թեկնածուների 2 դրական վերապահումով եզրակացության համար հիմք են հանդիսացել թեկնածուների գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները: Իսկ թվով 2 բացասական եզրակացություններից 1-ի համար հիմք են հանդիսացել գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները և թեկնածուին պատկանող կազմակերպության մասնակցությամբ պետության հետ կնքված գործարքի առնչությամբ առկա մտահոգությունները, իսկ մյուս թեկնածուի բացասական եզրակացության համար՝ գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները:



Խոսելով Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների մասին, պետք է նշել, որ ըստ Հանձնաժողովից ստացված պատասխանի՝ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության կազմում ընդգրկված դատավորների թվով 3 թեկնածուներից 1-ի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը տրամադրել է դրական, թվով 1-ի վերաբերյալ՝ դրական վերապահումով, 1-ի վերաբերյալ՝ բացասական եզրակացություններ: Թվով 1 բացասական և թվով 1 դրական վերապահումով եզրակացությունների համար հիմք են հանդիսացել թեկնածուների գույքային դրության առնչությամբ Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության կազմում ընդգրկված դատավորների թվով 3 թեկնածուներից 2-ի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը տրամադրել է դրական եզրակացությունը: Հանձնաժողովի անդամների ձայների հավասար բաշխվածության արդյունքում, 1 անձի վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացությամբ վերջինիս բարեվարքության վերջնական գնահատական չի տրամադրվել[87]:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորների թեկնածուների վերաբերյալ



Այսպիսով, Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների առաջխաղացման թեկնածուների և դատավորների թեկնածուների ցուցակներում ներառվել են անձինք, որոնց բարեվարքությունը գնահատվել է բացասական կամ դրական վերապահումով: Թեև որոշ թեկնածուներ հետագայում հանվել են դատավորների թեկնածուների և դատավորների առաջխաղացման թեկնածուների ցուցակներից, սակայն ինչպես Բարձրագույն դատական խորհրդի, այնպես էլ Ազգային ժողովի կողմից ընտրվել և Հանրապետության Նախագահի կողմից

[87] Հավելված՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացված հարցումն և ստացված պատասխանը

դատավորի պաշտոնում նշանակվել են նաև բարեվարքության առնչությամբ խնդիրներ ունեցող անձինք:

Բարձրագույն դատական խորհրդի որոշումը մի խումբ դատավորների թեկնածուների ցուցակներից հանելու վերաբերյալ

Ինչպես արդեն ներկայացվեց, 2022 թվականի օգոստոսի 4-ին Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունվել է որոշում[88], որով 10 դատավորի անուններ հանվել են վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների և հակակոռուպցիոն մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակներից: Որոշման հիմքում դրվել է Հանրապետության Նախագահի կողմից 2022 թվականի հուլիսի 22-ին և օգոստոսի 1-ին ներկայացված առարկությունները:

Առարկությունների առնչությամբ Նախագահի աշխատակազմից, Կազմակերպության հարցմանն ի պատասխան, պարզաբանել են, որ կարևորում են հակակոռուպցիոն դատարանների կազմավորման ու դրանց անկախության և անաչառության հանրային վստահության ձևավորումը: Հանրապետության նախագահը ԲԴԽ-ին առաջարկել է ըստ էության ուսումնասիրման և քննարկման առարկա դարձնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և փորձագետների կողմից տրամադրված խորհրդատվական եզրակացություններն ու կարծիքները, ինչպես նաև Հանրապետության նախագահին ներկայացնել դատավորների թեկնածուների նշանակման սահմանափակումները հավաստող փաստաթղթերի և անձնական գործերի ամբողջական փաթեթը[89]:

Հանրապետության Նախագահի կողմից առարկությունների ներկայացումն ու ըստ այդմ նշված թեկնածուների անունները վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների և հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի դատավորների թեկնածուների ցուցակներից հանելը կարելի է դրական նախադեպ դիտարկել: Սա կարևոր արձանագրում է նաև Նախագահի ինստիտուտի սահմանադրական լիազորությունների կյանքի կոչման տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, սակայն, պետք է արձանագրել, որ նույն ժամանակահատվածում Նախագահի հրամանագրերով պաշտոնի են նշանակվել նաև սույն զեկույցում ներկայացված թեկնածուներ, որոնց առնչությամբ ևս բարձրացված են եղել մտահոգիչ խնդիրներ և հիմնավոր տվյալներ, ինչը պահանջում է, որ կիրառվի միասնական մոտեցում՝ ապահովելով դատական համակարգի անկախությունն ու նշանակումների անաչառությունը:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների առաջխաղացման և դատավորների թեկնածուների ցուցակներից հանված թեկնածուներից ոմանք

---

[88] Մերի Համբարձումյանին, Միքայել Մելքումյանին, Մնացական Հարությունյանին, Լևոն Գրիգորյանին, Տաթևիկ Ստեփանյանին, Պավել Թադևոսյանին՝ վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակից, իսկ Կարեն Գրիգորյանին, Ռիմա Առաքելյանին, Նաիրա Ավետիսյանին և Սյուզաննա Վարդանյանին՝ դատավորների թեկնածուների ցուցակից հանելու մասին ԲԴԽ-76-Ո-249 որոշում, https://court.am/hy/decisions-single/1439:

[89] ՀՀ Նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչության կողմից Կազմակերպության հարցման պատասխան գրություն, 15.08.2022թ.:

Բարձրագույն դատական խորհրդի որոշման իրավաչափությունը վիճարկում են ՀՀ վարչական դատարանում[90]:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

- Հակակոռուպցիոն դատարանի ստեղծման վերաբերյալ նախնական քննարկումներում և օրենսդրական նախագծերում ի սկզբանե չի ներկայացվել բավարար հիմնավորում հակակոռուպցիոն դատարանի նախատեսվող դատավորների թվակազմերի վերաբերյալ, օրինակ՝ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի 10 դատավորի թվակազմը: Դատավորների թվակազմերի հաստատումը առավել պարզ և հիմնավոր լինելու համար անհրաժեշտ էր նախագծի հայեցակարգում ունենալ դատավորների թվակազմերի որոշակի գնահատում՝ հաշվի առնելով օրինակ տարեկան կտրվածքով հնարավոր գործերի քանակն ու դատարանի ծանրաբեռնվածությունը, նմանատիպ գործեր քննելու ընդհանուր առանձնահատկությունները, ծավալներն ու բարդությունը:
- Իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց դատավոր դառնալու համար ՀՀ դատական օրենսգրքով նախատեսվում է հեշտացված կարգ: Սակայն օրենսգրքով հստակեցված չէ, թե հատկապես որ ոլորտի գիտական աստիճան ունեցող անձանց է կարգը վերաբերում, ինչի պայմաններում իրավունքի ցանկացած նեղ ճյուղային եւ ոլորտային գիտական աստիճան ունեցող անձը կարող է նման արտոնություն ունենալ, մինչդեռ մասնագիտական կարողություններով էապես զիջել մնացած հավակնորդներից: Հատկապես մասնագիտացված դատավորների համար անհրաժեշտ էր նախատեսել ընթացակարգ, որը թույլ կտար գնահատել կոնկրետ ոլորտային կարողություններն ու համապատասխանությունը պաշտոնին:
- Վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի կազմման գործընթացում դիմումները ընդունելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդը իր նիստում ուսումնասիրում է թեկնածուի անձնական գործը, իսկ թեկնածուի՝ դատավոր չլինելու դեպքում նրա ներկայացրած և դրանց ստուգման արդյունքով ձեռք բերված փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում հրավիրում զրույցի: Զրույցի անցկացումը պարտադիր պահանջ չէ, այլ Բարձրագույն դատական խորհուրդն է որոշում դրա անհրաժեշտությունը: Միաժամանակ, հստակ չէ, թե որ դեպքերում է նման անհրաժեշտություն ի հայտ գալիս և ինչ հարցեր են քննարկվում զրույցի ընթացքում:
- Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանում դատավորների թեկնածուների ընտրության գործընթացը դուրս է հանրային վերահսկողության որևէ հնարավորությունից: Ի տարբերություն առաջին ատյանի դատարանի դատավորների թեկնածուների ցուցակի

[90] Տե՛ս օրինակ, Նաիրա Ավետիսյանն ընդդեմ Բարձրագույն դատական խորհրդի թիվ ՎԴ/6132/05/22 գործը; Տաթևիկ Ստեփանյանն ընդդեմ Բարձրագույն դատական խորհրդի թիվ ՎԴ/6091/05/22 գործը, Պավել Թադևոսյանն ընդդեմ Բարձրագույն դատական խորհրդի թիվ ՎԴ/5545/05/22 գործը:

համալրման գործընթացի, որտեղ հնարավոր է դիտորդություն, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում նման հնարավորություն նախատեսված չէ:

- Դատական օրենսգրքի և Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-98-Ո-281 որոշմամբ հաստատված Կարգի համաձայն՝ գրավոր քննության հարցեր մշակելու համար Բարձրագույն Դատական խորհուրդն ընտրում է համապատասխան մասնագետ/մասնագետներ կամ մասնագիտացված կազմակերպություն, սակայն Դատական օրենսգրքով և Կարգով հստակեցված չէ ոչ մասնագետից կամ մասնագիտացված կազմակերպությունից պահանջվող չափանիշները, ոչ էլ Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան ընտրության որոշման հիմքում դրվող չափանիշ-պահանջները:
- Դատական օրենսգրքի համաձայն՝ Դատական դեպարտամենտը, իսկ թեստային առաջադրանքների մշակումը մասնագիտացված կազմակերպությանը հանձնարարված լինելու դեպքում՝ այդ կազմակերպության ղեկավարը մասնագետից ստորագրություն է վերցնում դատավորների որակավորման քննության թեստային առաջադրանքների գաղտնիությունը դիտավորությամբ խախտելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելու մասին: Սակայն պարզ չէ, արդյոք սահմանված կարգավորումները բավարար են պրակտիկայում այդ երաշխիքները ապահովելու կամ ինչպիսի մեխանիզմ է գործում գաղտնիության խախտման հնարավոր դեպքերը բացահայտելու համար:
- Որակավորման քննությունների համար կազմված առաջադրանքների բովանդակությունը ամբողջությամբ չի արտահայտում Օրենսգրքով գրավոր առաջադրանքների համար նախատեսված նպատակները: Օրենսգիրքը սահմանում է, որ բացի տեսական իրավական գիտելիքների ստուգումից, դրանք ուղղված են նաեւ հավակնորդի վերլուծական եւ իրավակիրառ կարողությունների ստուգմանը: Ըստ այդմ՝ նախատեսվում է այլընտրանք՝ կամ իրավական խնդիրներ, կամ թեստային առաջադրանքներ: Երկրորդի պարագայում հավակնորդի մոտ վերլուծական կարողությունների ստուգումը չի ապահովվում, քանի որ հավակնորդը ուղղակի ընտրում է թեստում տրված պատասխաններից մեկը՝ առանց վերլուծության, մտքի շարադրման և մտածողության ստուգման հնարավորության:
- Ըստ դիտարկման արդյունքների՝ որակավորման ստուգման հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնի դատավարական իրավունքի թեստը չի համապատասխանել օրենսգրքով սահմանված պահանջներին եւ ներառված են եղել հարցեր, որոնք ընդհանրապես չեն բխել այդ մասնագիտացման բաժնին անհրաժեշտ կարողություններից:
- Զեկույցի մեջ ներկայացված են մի շարք խնդիրներ՝ կապված քննությունների դիտարկման պահին գործող որակավորման ստուգման ընթացքում հոգեբանական թեստավորման հետ: Մասնավորապես, հոգեբանական թեստավորումն անց էր կացվում հոգեբանական թեստերի համակցության միջոցով, որոնցով հնարավոր էր ստուգել հավակնորդի էմոցինալ ինտելեկտը, բարոյական դատողությունը, արժեքային համակարգը: Սակայն ոչ օրենսգիրքը, ոչ ԲԴԽ համապատասխան կարգը հավելյալ չեն կարգավորում նշված չափանիշներով անձի

հատկանիշների բացահայտման ձևը, ստացված տվյալների վերլուծության, գնահատման և եզրահանգման եղանակները: Այդ կարգավորումները, որոնց առնչությամբ արձանագրվել էին խնդիրներ Դատական օրենսգրքում այլևս սահմանված չեն, քանի որ օրենսդրական փոփոխությունների հիման վրա հոգեբանական թեստավորման փուլն առհասարակ հանվել է որակավորման ստուգման գործընթացից, սակայն այդ փոփոխության առնչությամբ որևէ հիմնավորում չի ներկայացվել որոշում կայացնող մարմինների կողմից:

- Որակավորման քննությունների հարցազրույցի փուլին կենտրոնական նշանակություն է ունեցել բարեվարքության ստուգման արդյունքների վերաբերյալ հարցադրումները, որոնք հիմնվել են լրացված բարեվարքության թերթիկի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված եզրակացության վրա: Բարեվարքության ստուգման վերաբերյալ Խորհրդի հարցադրումները հիմնականում վերաբերել են թեկնածուի անձի եւ ընտանիքի անդամների տվյալներին, ֆինանսական դրությանն ու միջոցներին, անձնական այլ տվյալների, որոնք Հանձնաժողովի կողմից խնդրահարույց են դիտարկվել:
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունները հրապարակային չեն և ունեն խորհրդատվական բնույթ: Պրակտիկայի դիտարկումը փաստում է, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների թեկնածուների և առաջխաղացման ցուցակներում ընդգրկվում են նույնիսկ բարեվարքության բացասական եզրակացություն ստացած անձինք՝ առանց որևէ պատճառաբանության և հիմնավորման:
- Որակավորման քննությունների հարցազրույցի դիտարկման արդյունքների համադրումը հասանելի հրապարակային տեղեկությունների հետ թույլ է տվել արձանագրել նաեւ, որ ԲԴԽ կողմից հաստատված հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի 16 թեկնածուներից առնվազն 6-ի առնչությամբ առկա են եղել մտահոգություններ բարեվարքության ստուգման և մասնավորապես հայտարարագրված ֆինանսական միջոցների, դրանց ծագման աղբյուրի ու հիմնավորումների առնչությամբ: Մտահոգությունները կապված են կամ անձամբ թեկնածուի հավակնորդի կամ վերջինիս ընտանիքի անդամի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացված հայտարարագրով ներկայացված ֆինանսական միջոցների եւ/կամ գույքի հետ:
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ցուցակներում ընդգրկված 16 թեկնածուներից 7-ի վերաբերյալ տրամադրվել է «դրական», 8-ի վերաբերյալ՝ «դրական վերապահումով» և 1 թեկնածուի վերաբերյալ՝ «բացասական» եզրակացություն:
- Թվով 8 դրական վերապահումով եզրակացություններից 4-ի համար հիմք են հանդիսացել թեկնածուների գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները, 3-ի համար՝ գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները եւ կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքները, իսկ 1-ի համար թեկնածուի՝ կարգապահական, վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքները: Ինչ վերաբերում է 1 բացասական եզրակացությանը, ապա վերջինիս հիմք

հանդիսացել է թեկնածուի կարգապահական, վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքները, ինչպես նաեւ թեկնածուի կողմից բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված տվյալների անարժանահավատությունը:

- Վերաքննիչ դատարաններում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով և հակակոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկված դատական ակտերի վերանայման դատավոր նշանակվելու համար ընտրվել է քաղաքացիական ոլորտի 6 թեկնածու և քրեական ոլորտի 4 թեկնածու: Առաջինի պարագայում 5 թեկնածու հանդիսացել է գործող դատավոր, երկրորդի պարագայում՝ 3-ը: Երկու դեպքում էլ բաց տվյալների ուսումնասիրությունը վեր է հանել մտահոգություններ՝ կապված դատավոր թեկնածուների եւ/կամ ընտանիքի անդամի ֆինանսական միջոցների հետ՝ մասնավորապես եկամուտների եւ կատարված ծախսերի անհամապատասխանության առնչությամբ: Ցուցակի թեկնածուների առնչությամբ առանձնակի մտահոգության տեղիք է տալիս ստացված նվիրատվությունների դեպքերն ու ծավալները:
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Վերաքննիչ դատարանի դատավորների 10 թեկնածուներից 6-ի վերաբերյալ տրամադրել է բարեվարքության ստուգման «դրական», 2-ի վերաբերյալ՝ «դրական վերապահումով» և մյուս 2-ի վերաբերյալ՝ «բացասական» եզրակացություններ:
- Բարձրագույն դատական խորհրդի կողմից Ազգային ժողով ներկայացրած թեկնածությունների քննարկման եւ Ազգային ժողովում վերջիններիս ներկայացման արդյունքում ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը համալրվել է 6 դատավորներով, որոնցից երեքը հանդիսանում են հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության կազմ, երեքը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության կազմ: Այս դատավորներից ոմանց առնչությամբ նույնպես առկա են մտահոգություններ ստացված չհիմնավորված նվիրատվությունների, ընտանեկան եւ անձնական կապերի, ինչպես նաեւ քաղաքական հայացքների առնչությամբ:
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության կազմի 3 թեկնածուներից 1-ի վերաբերյալ տրամադրել է դրական, թվով 1-ի վերաբերյալ՝ դրական վերապահումով, 1-ի վերաբերյալ ՝ բացասական եզրակացություններ: Նմանապես, հակակոռուպցիոն պալատի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության կազմում 3 թեկնածուներից 2-ի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը տրամադրել է դրական եզրակացություն: Հանձնաժողովի անդամների ձայների հավասար բաշխվածության արդյունքում 1 անձի վերաբերյալ կազմված բարեվարքության եզրակացությամբ վերջինիս բարեվարքության վերջնական գնահատական չի տրամադրվել:
- Թեև Հանրապետության նախագահի կողմից Բարձրագույն դատական խորհրդին ներկայացվել էին առարկություններ հակակոռուպցիոն դատարանի դատավորների և վերաքննիչ դատարաններում առաջխաղացման ենթակա դատավորների որոշ թեկնածուների

վերաբերյալ՝ առաջարկելով «ուսումնասիրման և քննարկման առարկա դարձնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և փորձագետների կողմից տրամադրված խորհրդատվական եզրակացություններն ու կարծիքները», սակայն նույն ժամանակահատվածում Հանրապետության նախագահի հրամանագրերով դատավոր պաշտոնի են նշանակվել զեկույցում ներկայացված թեկնածուներ, որոնց բարեվարքության առնչությամբ ևս բարձրացված են եղել մտահոգիչ տվյալներ, ինչը պահանջում էր միասնական մոտեցման կիրառում՝ ապահովելով դատական համակարգի անկախությունն ու նշանակումների անաչառությունը և հաշվետվողականությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վերանայել իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց համար դատավոր դառնալու կարգը՝ ապահովելով, որ գնահատվեն թեկնածուի համապատասխան մասնագիտական կարողություններն ու հմտությունները և ոլորտային մասնագիտացման առկայությունը:
2. Վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման գործընթացում նախատեսել թեկնածուներին հետ հարցազրույցի պարտադիր կարգ, այդ թվում՝ գործող դատավոր հանդիսացող թեկնածուների համար՝ նախատեսելով հարցազրույցի ընթացքում քննարկվող հարցերի հստակ շրջանակը:
3. Ապահովել Բարձրագույն դատական խորհրդի կողմից վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի թափանցիկությունը և հանրային հաշվետվողականությունը, այդ թվում՝ նախատեսելով ոլորտային հասարակական կազմակերպությունների կողմից բոլոր թեկնածուների հարցազրույցների դիտորդության հնարավորություն:
4. Դատական օրենսգրքով լրացուցիչ հստակեցնել որակավորման քննությունների գրավոր հարցեր մշակելու համար Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրվող մասնագետ/ների կամ մասնագիտական կազմակերպություններից պահանջվող չափանիշները:
5. Նախատեսել լրացուցիչ երաշխիքներ և մեխանիզմներ դատավորների որակավորման քննության գրավոր առաջադրանքների գաղտնիության ապահովման համար:
6. Պրակտիկայում ապահովել դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման քննությունների գրավոր առաջադրանքների համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, որպեսզի դրանցով հնարավոր լինի գնահատել թեկնածուների վերլուծական միտքը, իրավակիրառ կարողությունները:
7. Վերականգնել դատավորների թեկնածուների հավակնորդների հոգեբանական թեստավորման փուլը՝ ապահովելով նրանց էմոցիոնալ ինտելեկտը, բարոյական դատողությունը և արժեքային համակարգը գնահատելու արդյունավետ մեթոդաբանություն և կարգ: Միաժամանակ, ապահովել հոգեբանների ներգրավման գործընթացի թափանցիկությունը, թեկնածուներին

ներկայացվող չափանիշներն ու պահանջները, ապահովել հոգեբանական թեստերի և գնահատման արդյունքների հրապարակայնությունը:

8. Օրենսդրությամբ ապահովել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրվող բարեվարքության գնահատման եզրակացությունների հրապարակայնությունը:
9. Օրենսդրությամբ նախատեսել Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների թեկնածուների և առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման որոշումների հրապարակայնությունը և հիմնավորվածությունը, հատկապես բարեվարքության «բացասական» և «դրական վերապահումով» գնահատման եզրակացություն ստացած դատավորների թեկնածուների ընտրության և համապատասխան ցուցակներում ընդգրկելու որոշումների հիմնավորվածությունը և հրապարայնությունը: